# ԵՐԳԵՐ

## 1. ՀՈ ԴՈՒ ՅԱՐ ՉԷԼԱՐ

*Հո դու յար չէլար,*
*Ջանիս դարդ էլար։*
*Կանչում եմ, արի՛.*
*Հո դու յար չէլար,*
*Մոտս ման արի,*
*Ջանիս դարդ էլար։*
    *Կանչում եմ, արի.*
    *Հո զու յար չէլար,*
    *Օրն էլավ տարի,*
    *Ջանիս դարդ էլար։*

## 2. ԼՈՒՍՆՅԱԿԸ

*Լուսնակը կեռ ու կամար,*
    *Ամա՜ն, Մարո ջան,*
*Ես մեռնում եմ քեզ համար,*
    *Ա՜յ աման, անուշ յարո ջան։*
*Լուսնակի լուսը ես եմ,*
    *Ամա՜ն, Մարո ջան,*
*Իմ յարի հույսը ես եմ,*
    *Ա՜յ աման, անուշ յարո ջան։*
*Ձեռներդ ծափ ես տալիս,*
    *Աման, Մարո ջան,*
*Շորերդ թափ ես տալիս,*
    *Ա՜յ աման, անուշ յարո ջան։*
*Իմ մեջքինը քամար ա,*
    *Ամա՜ն, Մարո ջան,*
*Քո ունեքերը կամար ա,*
    *Ա՜յ աման, անուշ յարո ջան։*

## 3. ՅԱ՛Ր, ՅԱ՛Ր

*Կանչում եմ, արի՛, արի՛,*
    *Յա՛ր, յա՛ր, յարո ջան,*
*Մոտս ման արի,*
    *Լոթի Մարո ջան։*
*Կայնի, գալում եմ,*
    *Յա՛ր, յա՛ր, յարո ջան*
*Խնձոր թալում եմ,*
    *Լոթի յարո ջան։*
*Կայնել եմ քարին,*
    *Յա՛ր, յա՛ր, յարո ջան,*
*Կանչում եմ յարին,*
    *Լոթի յարո ջան։*
*Կանաչ սարին եմ,*
    *Յա՛ր, յա՛ր, յարո ջան,*
*Շեկլիկ յարին եմ,*
    *Լոթի յարո ջան։*

## 4. ՑԻՆԵԼԱՐ

*Ցինելար, լինելար,*
*Ցինելարս յաման ա,*
    *Աղջի ջան,*
    *Ջանե ջան,*
*Իմ ջան, քո ջանին ղուրբան ա։*
*Ղարիբ եմ, թառլան ղուշ եմ,*
*Ցինելար, չինելար,*
    *Ցինելարս թամամ ա,*
*Քեզի համար անուշ եմ,*
    *Աղջի ջան,*
    *Ջանե ջան,*
*Իմ ջան քո ջանին ղուրբան ա։*
*Գնա արի, բարին տուր,*
    *Ցինելար, չինելար,*
  *Ցինելարս յաման ա,*
*Նախշուն գուլպա յարին տուր,*
    *Աղջի ջան,*
    *Ջանե ջան,*
*Իմ ջան քո ջանին ղուրբան։*

## 5. ՄԱՐՈ ՋԱՆ

*Մանդր, մանդր ման արի,*
*Մարո ջան,*
    *Իրիկունը տուն արի,*
    *Յարո ջան։*
*Կայնի քարին, ձեն տուր յարին,*

Մարո ջան,
Նամակ գրեմ, տար տուր յարին,
Յարո ջան։

## 6. ԹԱԼԻ, ԹԱԼԻ....

Մուղնվա ջուրը սառն ա,
Թալի, թալի,
Շատ մոտիկ ա,
Ղարիբությունը դառն ա,
Աղջի, ծամերդ դոտիկ ա։
Սիրանի ծառը ծաղկել ա,
Թալի, թալի,
Շատ մոտիկ ա,
Յարիս ծամերը թախկել ա,
Աղջի ծամերդ դոտիկ ա։

## 7. ԾԱՄԵՐՈՎ ՅԱՐՍ

Ծամերով յարս,
Ծամերով յարս,
Վառեց չիգյարս,
Ծամերով յարս։
Աղջի, քու քելքը,
Ծամերով յարս,
Տարավ իմ խելքը,
Վառեց չիգյարս։
Բոլորի տարին,
Ծամերով յարս,
Կսպասեմ յարին,
Վառեց չիգյարս։

## 8. ՀԱՄԱՅԱԿ ՋԱՆ

Համայակը մեկ էր,
Մազերը շեկ էր,
Համայակ ջան,
Թուխս ու ճուտով
Տասնը մեկ էր,
Համայակ ջան։
Համայա՛կ, իմ յար,
Համայակ, քո յար.
Համայակ ջան։
Վերին բաղս ծախեմ,
Համայակիս պահեմ,
Համայակ ջան։
Կայնի ծաղիկ-սարին,
Ուշք ու միտքդ յարին,
Համայակ ջան։
Համայա՛կ, իմ յար,
Համայա՛կ, քո յար,
Համայակ ջան։

## 9. ՅԱՐ, ՅԱՆԱՐԱԿԱՆ ԵՄ

Յար, յանարական եմ,
Մոսկով վաճառական եմ։
Կանաչել են արտերս,
Յա՛ր, յանարական եմ,
Իրար մի տա դարդերս,
Մոսկով վաճառական եմ։
Յարիս յանարին մեռնեմ,
Յա՛ր, յանարական եմ,
Մեջքի քյամարին մեռնեմ,
Մոսկով վաճառական եմ։
Ջագիր եմ ղարկել սարին,
Յա՛ր, յանարական եմ,
Պայման եմ արել տարին,
Մոսկով վաճառական եմ։
Ինչ եմ անում Հարուստ տուն,
Յա՛ր, յանարական եմ,
Տղեն տես, աղջիկը տուր,
Մոսկով վաճառական եմ։

## 10. ԵՍ ԱՍԵՑԻ

Ես ասեցի՝ յարս էր գալիս
Բարձր սարիցը
Վարդ էր քաղում, փունջ էր կապում
Վարդի թփիցը.
Ասեցի՝ թող ես էլ քաշեմ
Էդ անուշ հոտիցը,
Ասավ՝ գնա՛, ղե՛, հեռացիր
Դուն իմ մոտիցը։
Հենց լսեցի էս խոսքերը
Յարիս բերնիցը,
Էլ ոտներիս ուժ չմնաց,
Շարժվեմ իմ տեղիցը։
Մաքում դրի՝ թողնեմ, կորչեմ
Արտիս խանդիցը,
Որ պրծնեմ յարիս տված
Կապուտ ցավիցը։

## 11. ՆԱԳԱՆ ՋԱՆ

Վո՛ւյ-վո՛ւյ Նագան ջան,
Յոթ կրական ջան,
Իմ օգնական ջան։
Գնացի Ախտեն,
Նագանիս բախտեն,
—Վո՛ւյ, վո՛ւյ Նագան ջան,
Իմ օգնական ջան։
Ճաղով գնացի,
Նագանս կորուցի,
Վո՛ւյ-վո՛ւյ Նագան ջան,

Յոթ կրական ջան,
Իմ օղնական ջան։

## 12. ՄԱՔՐՈՒՀԻ

Ժարտափ-ին էկավ դնգդնգալեն,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
Քարվանի մեջ
Ջարի մը կեր,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
Ջորու վերեն
Սնդուկմ կեր,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
Սնդուկի մեջ
Բողչե մը կեր,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
Բողչի մեջը
Հայլի մը կեր,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
Հայլու մեջը
Աղջիկ մը կեր,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
—Աղջի, աղջի,
Անունդ ի՞նչ ի,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի,
—Ա՜յ շան աղա,
Դավիդ ի՞նչ ի,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։
—Իմ խեր իմնա,
Բե կապանտ,
Մաքրուհի ջան, Մաքրո՛ւհի։

## 13. ՓՇԱՏԻ ԾԱՌ

Միրանի ես, շլորի,
Փշատի ծառ, ուռի
Բար մի տա,
Ճղներդ մի ոլորի,
Գյաղա արի
Քո սիրածը սարի
Միրանի ես թթենի,
Փշաթի ծառ, ուռի
Բար մի տա,
Տղա քո յարը դտի,
Գյաղա արի
Քո ուզածը ատր։

## 14. ՅԱՐՆ ԱՆՈՒՇ

Կարմուտ քուռակ հեծել եմ,
Քեզի մեռնեմ,
Արաղին մոռացել եմ,
Յարն անուշ։
Յարն անուշ ա,
Յարն անուշ,
Քեզի մեռնեմ,
Յար բերող
Մերն անուշ,
Յարն անուշ։
Արա՜ղ, ընձի ճամփա տուր,
Քեզի մեռնեմ,
Շեկ յարին կարոտցել եմ,
Յարն անուշ։
Յարն անուշ ա,
Յարն անուշ,
Քեզի մեռնեմ,
Յար բերող
Մերն էր անուշ,
Յարն անուշ։

## 15. ՎԱ՜Յ, ՎԱ՜Յ ԳՅՈՒԼԻ

Նստել ես ֆայտոնը,
Լավ ա սազում, յաման,
Քեզ մահուդե պալտոնը,
Վա՜յ, վա՜յ գյուլի յարը։
Ինչ եմ անում ոսկին,
Թողնեմ ոսկին, յաման,
Էրթամ յարիս խոսքին,
Վա՜յ, վա՜յ գյուլի յարը։
Ըխաերը դտտի,
Կանֆեան ուտի յարս
Թղթերը շպրտի
Վա՜յ, վա՜յ գյուլի յարս։

## 16. ԷՐԵՎԱՆ ԷԼԼՈՒ ՅԱՐ

Էրեվան բաղ եմ արել,
Էրեվա՛ն, էլլու յար,
Ջիղյարս դաղ եմ արել,
Ե՞րբ կգաս, Թելլու յար։
Էրեվան դար ու փոս ա,
Էրեվա՛ն, էլլու յար,
Խնձոր ղցեմ՝ կսոսա,
Ե՞րբ կգաս, Թելլու յար։
Էրեվանա քավոր եմ,
Էրեվա՛ն, էլլու յար,
Ջայի փնջի սովոր եմ,
Ե՞րբ կուգաս, Թելլու յար։
Էրեվան ղուքան-ղուքան,
Էրեվա՛ն, էլլու յար,
Ճերմակ շուշա բսաաքան,
Ե՞րբ կգաս, Թելլու յար։

## 17. ԽՆՁՈՐ ՔԱՂԻ

Խնձոր քաղի, գնաց ընկավ էն աղեն,
Մեր մայլի ծաղիկը սարավ շան դյաղեն,
Սարի գլխին տուն ունեմ,
Աղջի Անուշ,
Միջին ոսկի րում ունեմ,
Թուշդ անուշ։
Խնձոր քաղի գնաց ընկավ էն աղեն,
Մեր մայլի ծաղիկը սարավ շան գյաղեն։

## 18. ՄԱՐԱԼՈ

Մարալո, շան մարալո՛,
Մարալո՛,
Մարալո, ծառիս տակը
Պաղ աղբյուր,
Մարալո, արծաթե թաս
Ոսկե ջուր,
Մարալո, մի թաս կուզեմ
Էրկու տուր։
Մարալո, ուրախ կենանք
Ես ու դու։
Մարալո, շան մարալո՛,
Մարալո՛։
Մարալո, ձեր հանդումը
Վար կանեմ,
Մարալո, ձեր խնձորին
Քար կանեմ,
Մարալո, քեզի ընձի
Յար կանեմ։
Մարալո, շան Մարալո՛,
Մարալո՛։
Մարալո, շան Մարալո՛,
Մարալո՛։

## 19. ՀԱՆԴՈՒՄԸ ՄՆԱՑ

Հանդումը մնաց յարս,
Բանդումը մնաց յարս։
Հանդեն դաս դեղը մանես,
Հանդումը մնաց յարս,
Իմ դցած աեղը մանես,
Բանդումը մնաց յարս։
Կայնել ես ախա-րախա,
Հանդումը մնաց յարս,
Լաշակիդ առւսը կախ ա,
Բանդումը մնաց յարս։
Կայնել ես ախպրի ակին,
Հանդումը մնաց յարս,
Նման ես արեդակին,
Բանդումը մնաց յարս։

## 20. ՀԱՆԴԻ ԼԱԼԱ

Հանդի լալա էր յարըս,
Աղեի րալա էր յարըս։
Ո՞ւր գնացիր, ո՞ւր եկար,
Հանդի լալա էր յարս,
Դուն իմ սրաին դուր եկար,
Աղեի րալա էր յարս։
Աղվան-Օսան իմ յարը,
Հանդի լալա էր յարս (2)
Աղեի բալա էր յարս։
Խնձոր քաղի դուր եկավ,
Աղվան-Օսան իմ յարը,
Յարս մեր տուն հյուր եկավ,
Աղեի րալա էր յարս։

## 21. ԷԼԻՆՈ ՅԱՐ

Քթկալը ճիտս եմ գցել,
Էլինո յար,
Շեկ յարը միաս եմ դցել,
Թելինո յար։
Սարի խոտը կանաչ ա,
Էլինո յար,
Աղջիկ ազին ճանանչ ա,
Թելինո յար։
Էլել եմ Ալագյազը,
Էլինո յար,
Ձեմ առնի մալամազը,
Թելինո յար։
Ելա սարը սար տեսա,
Էլինո յար,
Կարմիր դյուլպով յար տեսա,
Թելինո յար։
Ալադյադ ուխտ եմ արել,
Էլինո յար,
Մազերս ջուխտ եմ արել,
Թելինո յար։

## 22. ՀԱՐՍ ՔՈ ՇՈՒՇՊԵՆ

Հարս քո շուշպեն կդնդընդա,
Ձես կրնա խաղա՝ մի անդանդա,
Ես քո դարդեն հիվանդ ընկա,
Գլորվեցա րախչեն ընկա։
Հարս, պապուշդ կճռճռա,
Խաս շորերըդ կսոսռա,
Հարս քո շուշպեն կզնդզնդա,
Ձես կրնա խաղա՝ մի անդտնդա։

## 23. Ա՜Յ ՔՅԱՄԱՐՍ

Ա՜յ, քյամարս, քյամարս,
Ղարսա բերած, քյամարս,

Ա՛յ, քյամարս, քյամարս,
Հարս ա բերած Թամարս։
Սիրուն աղջկա աերը,
Ա՛յ, քյամարս, քյամարս,
Չի տալիս էն խորթ մերը,
Ղարսա բերած քյամարս։
Սիրուն աղջիկ նազ ունես,
Ա՛յ, քյամարս, քյամարս,
Կաքավի փարվաղ ունես,
Հարս ա բերած Թամարս։

## 24. ԱՐԵՎ ԴԻՊԵ

Տիրուն արի մեր օրեն,
Արև դիպե, դառել ա,
Կարեմ մինթանիդ քյոքեն,
Սերդ սիրաս վառել ա։
Ա՛յ, դարուն ա, դարուն ա,
Արև ղիպե, ղառել ա,
Իմ յար քոնից սիրուն ա,
Սերդ սիրտս վառել ա։
Թաս ավեք բաբեմախթեմ,
Արև դիպե դառել ա,
Բալքիմ թամադին հաղթեմ,
Սերդ սիրտս վառել ա։

## 25. ԽՈՐՈՏ ԷՐ

Խորոտ էր մայլի տղեն,
Կոլոտ էր մայլի տղեն,
Տնդող, տնդող
Ման արի,
Ջերդ ղատարկ
Տուն արի։
Էս առվի ջուրը սառն ա,
Ջուր բերողն իմ յարն ա,
Տնդող, անդող
Ման արի,
Ջերդ ղատարկ
Տուն արի։
Էս առուն ջուր ա գալի,
Մի անսեք ուր ա գալի,
Տնդող, անդող
Ման արի,
Իրիկունը
Տուն արի։

## 26. ՏԻՐԱՆ-ՏԻՐԱՆ

Արփաչայի քյանարը,
Տիրան-Տիրան իմ յարը,
Վառավ սրտիս ֆանարը,
Հասած ծիրան իմ յարը։
Սիրեկանից հանողը,
Տիրան-Տիրան իմ յարը
Բալեն տանի դրողը,
Հասած ծիրան իմ յարը։

## 27. ԱՂՋԻ ԹԱՄԱՐ

Աղջի Թամար,
Ունքդ կամար,
Յա՛ր, յա՛ր,
Դուն ստեղծվել ես
Ինձ համար
Յա՛ր, յա՛ր։
Սարի կրակն անցավ,
Աղջի Թամար,
Ունքդ կամար,
Յա՛ր, յա՛ր,
Յարս ինձի չը մոռցավ,
Դուն ստեղծվել ես
Ինձ համար,
Յա՛ր, յա՛ր։
Սարին կրակ եմ արել,
Աղջի Թամար,
Ունքդ կամար,
Յա՛ր, յա՛ր,
Յարիս ջուղար եմ արել,
Դուն ստեղծվել ես
Ինձ համար
Յա՛ր, յա՛ր։

## 28. ԿԱՐԲԻԻ ՅԱՅԼԻ...

Հա՛յ առնում եմ, առնում եմ,
Թևերս էկավ, թռնում եմ,
Գնացել ես, էկել ես,
Հա՛յ առնում եմ, առնում եմ,
Ուղուն բոյդ քոքել ես,
Թևերս էկավ, թռնում եմ։
Գնացիր, էկար բարով,
Հա՛յ առնում եմ, առնում եմ,
Ինձի տվիր ժեռ քարով,
Թևերս էկավ, թռնում եմ։
Մուղնիա ջուրը սառն ա,
Հա՛յ առնում եմ, առնում եմ,
Մուղնի էրթողն իմ յարն ա,
Թևերս էկավ, թռնում եմ։

## 29. ԵՍ ՄԱՐԱԼ

Ես մարալ, յարս մարալ,
Մեկ ու ճար յալ։
Աղջի, անունդ Մայի,
Ես մարալ, յարս մարալ,

Ճակատդ բոլոր շահի,
    Ես մարալ, յարս մարալ,
    Մեկ ու ճար, յար։
Աղջի, դու ի՞նչ լավ բան ես,
    Ես մարալ, յարս մարալ,
Ինձի մտահան չանես,
    Ես մարալ, յարս մարալ,
Մեկ ու ճար յար։

## 30. ԹԵԼԼՈ

Թելլո, օ՜յ, Թելլո օ՜յ,
    Թելլո ջան,
Սևիկ, սիրուն, յարո ջան։
Մեռա բաղում բանելեն,
    Թելլո օ՜յ, Թելլո օ՜յ,
    Թելլո ջան,
Մի կողմեն ջուր անելեն,
    Սեիկ, սիրուն յարո ջան։
Ծառերին թուփ չմնաց,
    Թելլո օ՜յ, Թելլո օ՜յ,
    Թելլո շան.
Դարդիս ղարման անելեն,
    Սեիկ, սիրուն, յարո ջան։
Նսաած աեղս քար չունեմ,
    Թելլո օ՜յ, Թելլո օ՜յ,
    Թելլո ջան,
Ջիմանաս թե յար չունեմ,
    Սևիկ սիրուն յարո ջան։
Ա՜յ, անիրավ շան աշխարհ,
    Թելլո օ՜յ, Թելլո օ՜յ,
    Թելլո ջան,
Բաղ ունեմ ու բար չունեմ,
    Սեիկ սիրուն, յարո ջան։

## 31. ՀՈՅ ԻՄ ՆԱԶԱՆԻ...

Հո՜յ իմ Նաղանի յարը,
Դուման ա վերին սարը։
    Ոշխարն արել եմ գուզը,
    Հո՜յ իմ Նաղանի յարը,
Ջոկել եմ ղարագյոզը,
    Դուման ա վերին սարը։
Բարակ բարդու բարին տես,
    Հո՜յ իմ Նաղանի յարը,
Էն անիրավ յարին տես,
    Դուման ա վերին սարը։
Բարակ առուն ջուր կուգա,
    Հո՜յ իմ Նազանի յարը.
Նաղանն ընձի գուր կուգա,
    Դուման ա վերին սարը։

## 32. ԲՈՒԹԵԼ-ԲՈՒԹԵԼ

Բութել-բութելս, տարան,
    Յար ջան,
Իմ յարին Գյանջա տարան։
Սև էր չոբանի շունը, ամա՜ն,
    Բութել-բութելս տարան,
    Յար ջան,
Ջի տանի յարիս քունը, յաման,
    Իմ յարին Գյանջա տարան։

## 33. ԳՅՈՒԼԱ-ԳՅՈՒԼԱ

Մարգերի գոլերը,
Սիպտակել է, յար ջան,
Բլուզիդ զոլերը,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Մեր սարը բանցր ա,
    Ինքը սև ա, յարս,
Սրունը քաղցր ա,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Իմ անիրավ մերը,
    Դնեմ սելը, աղջի,
Տանեմ Տիրամերը,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Իմ անիրավ ազին,
    Դնեմ սելը, աղջի,
Տանեմ Աստվածածին,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Հինը հիշ եմ արել,
    Մարգը մեջ եմ արել,
Թազա յար եմ ճարել,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Յարս անցավ ղեսը,
    Դուզն եմ ասում, ագջի,
Տարավ կյանքիս կեսը,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Նսաեմ պարախողը,
    Դուզն եմ ասում, աղջի,
Էրթամ յարիս մոտը
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Պարախոզն էր պեռվի,
    Դուզն եմ ասում, աղջի,
Քու կրակով էրվի,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։
Տալոն ալուր մաղեց,
Մի խոսք ասեք, աղջի,
Իմ ջիգյարը դաղեց,
    Վա՜յ, վա՜յ, գյուլա յարս։

## 34. ՅԱՐ ՋԱՆ

Յար ջան ուղուլմիշ արա,
Պարդ դուղուլմիշ արա։

Սիրահարի սերիցը,
Յար ջան ուղուլմիշ արա,
Ես վառվա քու ձեռիցը,
Պարդ ղուղուլմիշ արա։
Պարրաշի՛, պարդ քաշի,
Յար ջան ուղուլմիշ արա,
Էլ դես ու դեն մի քաշի,
Պարդ ղուղուլմիշ արա։
Էսօր Նուրը Նորել ա,
Յար ջան ուղուլմիշ արա,
Յարիս քունը կորել ա,
Պարդ ղուղուլմիշ արա։
—Ա՛յ պարրաշի, պարրաշի,
Յար ջան ուղուլմիշ արա,
Պարողներին մեջ քաշի,
Պարդ ղուղուլմիշ արա։

## 35. ԱԴԵԻ ԲԱԼԱ

Ես աղջիկ եմ նշանլու,
Ադեի բալա,
Էգուց կգան տանելու,
Սիրովդ վառա։
Կսուր կայնողին մեռնեմ,
Ադեի բալա,
Քյաբուլ սանդրողին կառնեմ,
Սիրովդ վառա։
Կսուր կայնողը ես եմ,
Ադեի բալա,
Քյաբուլ սանդրողը ես եմ,
Սիրեցի առա։
Անտեր մնար քաղքներ,
Ադեի բալա,
Թափավ ղեյրես ծաղկներ,
Սիրովդ վառա։

## 36. ԶԱԼՈ

Գարնան արև ա արել,
Զալո՛, ձալո՛,
Յարս բարև ա արել,
Զալո՛, ձալո՛։
Գաղթականի վարժապետին առել եմ,
Զալո՛, ձալո՛,
Գեղականին վառել եմ,
Զալո՛, ձալո՛։
Յար ջան, արևիդ մեռնեմ,
Զալո՛, ձալո՛,
Ղրկած բարեդ կառնեմ,
Զալո՛, ձալո՛։
Գաղթականի վարժապետին առել եմ,
Զալո՛, ձալո՛։
Գեղականին վառել եմ
Զալո՛, ձալո՛։
Թե սուս ասեմ՝ քոռանամ,
Զալո՛, ձալո՛,
Շեկ յարին ոնց մոռանամ,
Զալո՛, ձալո՛։
Գաղթականի վարժապետին առել եմ,
Զալո՛, ձալո՛,
Գեղականին վառել եմ,
Զալո՛, ձալո՛,
Տերաերն ասեց ամոթ ա,
Զալո՛, ձալո՛,
Աղջիկ աղին ծանոթ ա,
Զալո՛, ձալո՛։

## 37. ՅԱՐ ՍՈՆԱ

Խոտ քաղողը իմ Հերն ա,
Յա՛ր Սոնա,
Յա՛ր Սոնա,
Հաց բերողը իմ մերն ա,
Իմ ուզածը Վարսոն ա։
Արտ եմ ցանել, գարի ա,
Յա՛ր Սոնա,
Յա՛ր Սոնա,
Էս ո՞նչ վերան սարի ա,
Իմ ուզածը Վարսոն ա։
Հաց եմ թխե փրփրի,
Յա՛ր Սոնա,
Յա՛ր Սոնա,
Քելե ախպուրը ջրի,
Իմ ուզածը Վարսոն ա։

## 38. ՄԱՇԻՆՆԵՆ ԷԿԱՎ

Մաշիննեն էկավ
Ակներր շուշա,
Սաթոն չեմ առնի,
Աղե ջան,
Վարսոն անուշ ա։
Մաշիննեն էկավ,
Գոռալեն գնաց,
Ա՜խ, ինչ անեմ
Աղե ջան
Բարեդ մնաց։
Մաշիննեն էկավ,
Ակներր շուշա,
Սաթոն չեմ առնի,
Աղե ջան,
Վարսոն անուշ ա։

## 39. ԾԱՌԻ ԲԱՐԸ

Ծառի բարր նուշ կըլնի,
Բարեդ անուշ կըլնի,
Արի ասնեմ մեղի Հարս,

Թե չէ՝ մնա ուշ կըլնի։
Ղարաֆիլը դեզին ա,
Քո անունը Հեզին ա,
Ճամփա տվեք թող առնի դա,
Իմ յարը ձեր գեզին ա։
Էս ֆայտոնը մերն ըլներ,
Ակները կարմիր ըլներ,
Յարս անցնի ճամփեքով,
Էրթամ, հասնեմ յարիս քով։

## 40. ՂԱՐԱԲԱՂԻ ՋԱՆԳՅՈՒԼՈՒՄԸ

Կարմիր վարդը, վարդ չունեմ,
Զիմանաս թե դարդ չունեմ,
Գիտես, թե ես մենակ եմ,
Ու սիրելի յար չունեմ։
—Լելե՜, լելե՜, լելե՜ լե՜,
Համբարձում յայլա,
Յայլա ջան յայլա,
Համբարձում
Յայլա
Յայլա ջան,
Յայլա
Լավ օրեր
Յայլա,
Յայլա ջ̱ան,
Յայլա։
Էրնեկ քեզի, դարդ չունես,
Օտար աշխարք յար չունես,
Դարդն էկել ա ինձ տարել,
Դու իսկի խաբար չունես։
—Լելե՜, լելե՜, լելե՜ լե՜...

## 41. ԱՅ ԲԼՈՒԶԸ...

Գութանով վար ա̇ն̄ անում,
Բլուզը,
Դուշմանին քար եմ անում,
Բլուզը.
Ա՜յ բլուզը,
Բլուզը, բլուզը,
Ղարաքիլիսի դուզը,
Բլուզը։
Արտիս միջին հով քամի,
Բլուզը,
Քունս անուշ կտանի,
Բլուզը,
Ա՜յ բլուզը,
Բլուզը, բլուզը,
Ղարաքիլիսի դուզը,
Բլաւզը։

## 42. ԱՅ, ՍԱՐԻ ՏՂԱ

Ա՜յ սարի տղա,
Ջան, սարի տղա,
Բաղվան ես,
Բաղրդյան ես,
Դե, արի տղա։
Կրբրես ոսկին,
Կդամ քո խոսքին,
Չես րերի ոսկին,
Չեմ դա քո խոսքին։
Կրերես ալը,
Կը հագնեմ շալը,
Չես բերի ալը,
Չեմ հագնի շալը։
Այս սարի տղա...
Կը բերես սանդը,
Կը նսաեմ ծանդը,
Չես բերի սանդը,
Չեմ նստի ծանդը։
Կրերես կոշիկ,
Կը հաքնեմ մաշիկ,
Չ:ս բերի կոշիկ
Չեմ հագնի մաշիկ։
Ա՜յ սարի տդա,
Կրերես դոաիկ,
Կդամ քեզ մոաիկ,
Չես բերի դոտիկ
Չեմ դա քեզ մոտիկ։
Ա՜յ սարի տղա։

## 43. ՄՈՒՐԱԴ ԴԵՏԻ

Մուրադ դետի չայիրների բոլորը,
Ես մի մարալ, դալդես ընկա չոլերը։
Էսօր ուրրաթ ա, պաս ա,
Մուրադ դետի չայիրների բոլորը։
Ծոցինդ արծաթե թաս ա,
Ես մի մարալ, դարդես ընկա չոլերը։
Էլել եմ սարի ասր,
Մուրադ դեաի չայիրների բոլորը,
Բռնեմ արեի լուսը,
Ես մի մարալ դարդես ընկա չոլերը։
Ղոնաղ էկավ էն սարից,
Մուրադ դետի չայիրների բոլորը,
Խաբար բերեց իմ յարից,
Ես մի մարալ, դարդես ընկա չոլերը։

## 44. ԿԱՅՆԱ ՔԱՐԻՆ

Կայնա քարին դուշ էլա,
Անուշ ջան,
Եթիմ ադի թուշ էլա,

Քեզի ղուրբան,
Ջանեջա՛ն։
Վարդի ծառին փուշ կըլնի,
Անուշ ջան,
Նշի ծառին նուշ կըլնի,
Քեզ ղուրբան,
Ջանեջա՛ն։
Ալ բլուզդ կարեցի,
Անուշ ջան,
Դոշին սադաֆ շարեցի,
Քեզ ղուրբան,
Ջանեջա՛ն։
Գդակդ ծուռն ես դրել
Անուշ ջան,
Աչքդ մեր դուռն ես դրել,
Ջանեջա՛ն։

## 45. ՕՍԱՆ ՅԱՐ, ՅԱՐ

Օսան յա՛ր, յա՛ր ու յամա՛ն,
Ասա՝ դարդդ իմանամ։
Ալագյազը մեր սարն ա,
Օսան յա՛ր, յա՛ր ու յամա՛ն,
Սար գնացողն իմ յարն ա,
Ասա՝ դարդդ իմանամ։
Ալագյազ բարձր սարին,
Օսան յա՛ր, յա՛ր ու յամա՛ն,
Էրթամ հասնեմ իմ յարին,
Ասա դարդդ իմանամ։

## 46. ԱՄԱՆ ՄԱՐՈ

Ամա՛ն, Մարո՛, Մարո՛,
Սաղանդարի յարո,
Ջաղիր ղարկեմ էն ղարին,
Ամա՛ն, Մարո՛, Մարո՛,
Բալքի գտնեմ էն յարին,
Սազանդարի յարո։
Ոչխարը սարի ուսին,
Ամա՛ն, Մարո՛, Մարո՛,
Ես արև եմ, դու լուսին,
Սաղանդարի յարո։

## 47. ՂԱՐՍԱ ՋՈՒՐԸ

Ղարսա ջուրը սառել ա,
Ղամեն թես առել ա,
Մի լոթի-փոթի աղջիկ,
Ուշ ու միտքս առել ա։
Ղարսա բերդը բլել ա,
Յարս մեջին քնել ա,
Ձեն տվի, ձենս չառավ,
Էս ինչ անուշ քնել ա։
Ղարսա ջուրը....

## 48. ԱԼԱԳՅՈԶԼՈՒ

Ալագյոզլու, նազլու դիլբար,
Թուխ էրեսիդ խալին ղուրբան։
Յար կայնել ես կաժ կմանես,
Ալագյոզլու, նազլու դիլբար,
Յա՛ր, արեգակի նման ես,
Թուխ էրեսիդ խալին ղուրբան։
Յար կանգնել ես աղբրի ափին,
Ալագյոզլու, նազլու դիլբար,
Յա՛ր, շող կուտաս արեգակին,
Թուխ էրեսիդ խալին ղուրբան։

## 49. ԳՅՈՒԼԱ-ԳՅՈՒԼԱ

Գյուլա՛, գյուլա՛, յարս,
Բամբակի քուլա, յարս։
Գնա՛, գնա՛, հետիդ եմ, յա՛ր ջան,
Ալ խնձոր եմ ջերիդ եմ, յա՛ր ջան,
Դու անց կացար հուլա-հուլա, յա՛ր ջան,
Դու նման ես բամբկի քուլա, յա՛ր ջան։

## 50. ԱՅ ԼՈԹԻ ՅԱՐ ՋԱՆ

Բամբակ եմ ցանել դող ա,
Ա՛յ լոթի յար ջան,
Մի յար եմ սիրել թազա,
Կոներդ մարջան։
Դամբուլի կոթը քերեմ,
Ա՛յ լոթի յար ջան,
Մեկ նստի գինի բերեմ,
Կոներդ մարջան։
Կարմիր գինին թափեցինք
Ա՛յ լոթի յար ջան,
Թազա միսին խարեցինք,
Կոներդ մարջան։

## 51. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ

Անտեր մնար կարմիր գիլասի ծառը,
Դարչին-մեխակ, յա՛ր ջան, էրթանք մեր բաղը։
Բարակ եմ բարդու ծառ եմ,
Անտեր մնար կարմիր գիլասի ծառը,
Քելելուց մարդ կվառեմ,
Դարչին-մեխակ, յա՛ր ջան, էրթանք մեր բաղը։
Թոե՛ք, թող թողը ըլնի,
Անաեր մնար կարմիր գիլասի ծառը,
Դուշմանիս գոգն ըլնի,
Դարչին-մեխակ, յա՛ր ջան, էրթանք մեր բաղը։

Թոն՛ք, թող մաշիկ ծակվի,
Անաեր մնար կարմիր դիլասի ծառը,
Մաշիկ կարողը սաղ ըլնի,
Դարչին-մեխակ, յա՛ր ջան, էրթանք մեր բաղը։

## 52. ԷԼԻ ԼՈԹԻ...

Գնա արի ման արի,
Էլի լոթի յար ջան,
Բալիշ դնեմ, յան արի,
Հողուղ մեռնեմ, յա՛ր ջան։
Գնա արի շաղին առր,
Էլի լոթի յար ջան,
Կարմիր դյուլպա յարին տուր,
Հողուդ մեռնեմ, յա՛ր ջան։
Ջաղացի ղուռը չիման,
Էլի լոթի յար ջան,
Էն յարին չկար իման,
Հողուդ մեռնեմ, յա՛ր ջան։
Աղջի էրթանք մեզ քաղհան,
Էլի լոթի յար ջան,
Երեսդ ա դյունարախան,
Հողուդ մեռնեմ, յա՛ր ջան։

## 53. ՔՅՈՐՕՂԼՈՒ ՏՂԱ

Բարակ եմ՝ բարղու ծառ եմ,
Մեր մայլի տղա,
Քելելուց մարդ կվառեմ,
Քյորօ՛ղլու տղա։
Բարակ բարդու բարին եմ,
Մեր մայլի աղա,
Էն անիրավ յարին եմ,
Քյորօ՛ղլու տղա։
Բարակ բարդուն բար չկա,
Մեր մայլի աղա,
Փիս աղջկան յար չկա,
Քյորօ՛ղլու տղա։
Սարեն իջան ջուխտ աղջիկ,
Մեր մայլի աղա,
Ջխաի կողնոցն էր լասաիկ,
Քյործղլու աղա։

## 54. ՉԻՆ ՕՂԼԱՆ

Չի՛ն, չի՛ն, չին օղլան,
Ջառբար չուխա,
Չիթ ալխալուղ,
Չին օղլան։
Արաղաիր չիման ա,
Չի՛ն, չի՛ն, չին օղլան,
Նանրդ դալդ չիմանա,
Չի՛ն, չի՛ն, չին օղլան,
Էսօր հանգր հաց տարա,
Չի՛ն, չի՛ն, չին օղլան,
Յարս հոն չէր, եդ դառա,
Չի՛ն, չի՛ն, չին օղլան,
Ջառբար չուխա, չին օ՛ղլան։

## 55. ՍԱՐ, ՍԱՐ

Սա՛ր, սա՛ր,
Ես սարերի ծաղիկն եմ,
Ջա՛ն, ջա՛ն,
Ես Լեռնի քույրիկն եմ։
Սա՛ր, սա՛ր,
Էն սարին սար չեմ ասի,
Ջա՛ն, ջա՛ն,
Փիս տղին յար չեմ ասի։
Սա՛ր, սա՛ր,
Սարի խոտր կանաչ ա,
Ջա՛ն, ջա՛ն,
Աղջիկ տղին ճանաչ ա։
Սա՛ր, սա՛ր,
Սարր սարին նման չի,
Ջա՛ն, ջա՛ն,
Աղջիկ աղին հավան չի։

## 56. ՄԱՆԴՐ, ՄԱՆԴՐ

Մանդր, մանղր,
Տասներկու սարեկան եմ,
Մանղր, մանդր,
Քո սրտին ղուրեկան եմ։
Հավեն ամպե, կդա ձուն,
Մանդր, մանդր,
Տասներկու սարեկան եմ,
Օրր մթնե չի դա տուն
Մանդր, մանդր,
Քու սրտի սիրեկանն եմ։

## 57. Ա՛Յ ՆԱՆԻ

Ա՛յ նանի, ցավդ տանեմ,
Դարդերս էլ ո՞ւմ պաամեմ,
Ամա՛ն,
Դարդերս էլ ո՞ւմ պաամեմ,
Ա՛յ յար, ա՛յ յար, կայնել ես,
Մարա այլուխ բռնել ես,
Բարև ավէ առար ոչ,
Մաղամ թարկս տվել ես։
Ա՛յ նանի, ցավդ տանեմ,
Դարդերս էլ ո՞ւմ պատմեմ,
Ամա՛ն,
Դարդերս էլ ո՞ւմ պատմեմ։
Ճամփիցը մոլորել ես,
Ինձանից խռովել ես,

Դե նա դառի բան ասեմ,
Քաղցր խոսք ու ջան ասեմ։
Ա՜յ նանի, ցավդ տանեմ,
Դարդերս էլ ո՞ւմ պատմեմ,
Ամա՜ն,
Դարդերս էլ ո՞ւմ պատմեմ։

## 58. ՄԱՅՐԻԿԻՆ ՔՈՒՅՐԻԿԻՆ

Մայրիկին փալտոն բերեք,
Քույրիկին՝ կառեթ,
Հայրիկին էշի կաշկա,
Ակե՛ր չունենա,
Ակե՛ր չուննենա,
Ակե՛ր չուննենա,
Մեղք ու կրակ ա։
Մայրիկին պալտոն բերեք,
Քույրիկին՝ ժակետ,
Հայրիկին մի հին չուխա,
Թևե՛ր չունենա,
Թևե՛ր չուննենա,
Թևե՛ր չուննենա,
Դարդ ու բալա յա։
Մեղք ու կրակ ա։
Մայրիկին տուֆլի բերեք,
Քույրիկին՝ կալոշ,
Հայրիկին մի ջուխտ արխ,
Տակե՛ր չունենա,
Տակե՛ր չուննենա,
Տակե՛ր չունենա,
Մեղք ու կրակ ա։
Մայրիկին ամեն օր համամ,
Քույրիկին՝ ութ օրը մեկ,
Հայրիկին՝ զատկե-զատիկ,
Սապո՛ն չուննենա,
Սապո՛ն չուննենա,
Սապո՛ն չուննենա,
Դարդ ու բալա յա։

## 59. ԱՐԻ ՅԱՄԱՆ

Արի յաման, բալի յաման,
Բարն անուշ կըլնի,
Հեռու տեղից,
Սարի դեղից,
Յարն անուշ կըլնի։
Ալ մինթանա ես ուզում, ուզում,
Բարն անուշ ա,
Իմ սիրար քեզ էր ուզում,
Յարն անուշ ա,
Արի յաման, բալի յաման,
Բարն անուշ կըլնի։

Կապել է կարմիր դոտիկ,
Բարն անուշ ա,
Մի յար ունեմ խորոտիկ,
Յարն անուշ ա։

## 60. ԱՂՋԻ ԴՈՒԴՈՒԼ

Բալկոնը ման ես գալի,
Բալկոնը ման ես գալի,
Կտոր-կտոր ես գալի,
Կտոր-կտոր ես գալի,
Աղջի՛ դուդուլ,
Ջա՛ն դուդուլ,
Ջանդի՛ դուդուլ,
Ջա՛ն, դուդուլ։
Դուդուլ կայնե կամրջին,
Դուդուլ կայնե կամրջին,
Ոսկե գնդերն ականջին,
Ոսկե գնդերն ականջին,
Աղջի՛ դուդուլ,
Ջա՛ն դուդուլ,
Ջանդի՛ դուդուլ,
Ջա՛ն, դուդուլ։

## 61. ԱՂՋԻ ԱՆՆԱ

Աղջի Աննա, գլինա,
Մերդ տանն ա, գլինա,
Ասա դուրս գա, յաման,
Ինձի մի խոսք տա, գլինա։
Աղջի Աննա, գլինա,
Ինձ մի մոռնա, գլինա,
Ես ձեր դռնեն, յամա՜ն,
Էլ չեմ դառնա, գլինա։

## 62. ՏԱՍՆԵՐԿՈՒ ՕՐ

Տասներկու օր, տասներկու օր
Վառա ես,
Անձրև ղանեց, աղկա ես։
Տասներկու օր, տասներկու օր
Վառա ես,
Արև ղանեց, չորցա ես։
Տասներկու օր, տասներկու օր
Վառա ես։
Մե պուա ջուր լից ախպուրեն,
Տասներկու օր, տասներկու օր
Վառա ես,
Քեզի սիրի չառա ես։

## 63. ԱՅ ՀԵՎԱ

Ա՜յ հևա, հևա սիրաս,
Ճնճղուկի թև ա սիրաս,

Իմ առմ լեն ու մեյդան ա,
Ա՛յ հևա, հևա սիրտս,
Մի յար ունեմ ջեյրան ա,
Ծնճղուկի թև ա սիրաս։
Իմ հոր դարին քարմաղած,
Ա՛յ հևա, հևա սիրտս,
Իմ հոր հարսը շարմաղած,
Ծնճղուկի թև ա սիրտս։

## 64. ԱՅ ԷՍ ՏԱՐԻ

Ա՛յ էս տարի, էս տարի,
Խնձոր քիչ կա էս տարի,
Որ ես առնեմ,
Բեռներ ռնեմ,
Էդվան ճամփեմ,
Իմ յարին, իմ յարին։
Ա՛յ էս տարի, էս տարի,
Խաղող քիչ կա էս տարի,
Որ ես ելնեմ,
Սելեր ռեռնեմ,
Էդվան ճամփեմ,
Իմ յարին, իմ յարին։
Ա՛յ էս տարի, էս տարի,
Ջամիչ շատ կա, էս տարի,
Առնեմ, ղառնամ,
Բեռներ ռառնամ,
Էդվան ճամփեմ,
Իմ յարին, իմ յարին։

## 65. ԴՈՒՋՔՅԱՆԴԸ

Դուղքյանդի, Դուղքյանդի դուրանը,
Յար ինձ վառեց, վա՛յ քո ղրկած
Նկա՛րը, Նամա՛կը, Նշա՛նը։
Արաղի խոր աղեքը,
Դուղքյանդի, Դուղքյանդի դուրանը,
Ջալեք թադտ ղայդեքը,
Յար ինձ վառեց, վա՛յ քո ղրկած
Նկա՛րը, Նամա՛կը, Նշա՛նը։
Խաղ կկանչեմ սեդ սարին,
Դուղքյանդի, Դուղքյանդի դուրանը,
Խարար կառնեմ շեկ յարեն,
Յար ինձ վառեց, վա՛յ քո ղրկած
Նկա՛րը, Նամա՛կը, Նշա՛նը։

## 66. ՍՈՒՓՐԵՆ ՓՌԱԾ

Սուփրեն փռած, վրեն խորոված հավ ըլնի,
Ով չի ուղի իր առածը լավ ըլնի։
Տանս տակը բող կանեմ,
Քեղ ինձի ղոնաղ կանեմ,
Կերուխումի ժամանակ,
Քեֆս, հալս չաղ կանեմ։

## 67. ՎԱՅ ԱՄԱՆ

Վա՛յ աման, ադե ջան, էրվա ես,
Շեկ յարի կրակով վառվա ես։
Սուրր Ակորա ղշերը,
Վա՛յ աման, ադե ջան, էրվա ես,
Յարիս կարմիր թշերը,
Շեկ յարի Նամակով վառվա ես։

## 68. ԱՅ ԽԱՆԼՈՒ

Ա՛յ խանլու,
Խանլու յարս,
Նշանլու, Թելլու յարս։
Ջանջաֆիլը դեղին ա,
Ա՛յ խանլու,
Խանլու յարս,
Իմ յարը ձեր դեղին ա,
Նշանլու, Թելլու յարս։
Մինթանիդ քորեն խաս ա,
Ա՛յ խանլու,
Խանլու յարս
Շեկ մաղերիդ կըսաղա,
Նշանլու, Թելլու յարս։
Ծաղիկ քաղի լալա էր,
Ա՛յ խանլու,
Խանլու յարս,
Նշանլու, Թելլու յարս։

## 69. ՍԱՐԻ ԱՂՋԻԿ

Սարի աղջիկ ես,
Շատ դեղեցիկ ես,
Աչքդ խումար,
Ունքդ կամար,
Սարի աղջիկ ես։
Ծաղիկ ես, ծաղիկ ես,
Փնջավոր աղջիկ ես։
Աչքդ խումար,
Ունքդ կամար,
Սարի աղջիկ ես։

## 70. ՇԵԿՈ ՋԱՆ

Շեկո ջան, մաղերդ,
Կամար են ունքերդ,
Կարղա Նամակս,
Կառնես փափակս,
Շեկո ջան, մաղերդ,
Կամար են ունքերդ։

## 71. ՔԱԲԱԲՆ ԱՐԻ

Քարարն արի, տարա օդեն,

Նոր եմ դալի յարիս մոտեն,
Չկշտացա համեն, հոտեն։
Զնգզնգալեն շայ կրեբեմ,
Զնգզնգալեն շայ կրեբեմ,
Չայեն հետո փունջ կրեբեմ։
Կարմիր մարջան վզին շարած,
Ոսկե մատնիք մատին դրած,
Նոր ա էկել յարս օղեն,
Չկշտացա համեն, հոտեն։
Զնգզնգալեն շայ կրեբեմ,
Զնգզնգալեն շայ կրեբեմ,
Չայեն հետո փունջ կրեբեմ։

72. ԼՈՐԻԿ ՅԱՐՍ

Լորիկ յարս տարել են,
Իմ ձեռքիցը առել են,
Աստված սիրեք ճար արեք,
Սիրտս կրակով վառել են։
Առել են, տարել են,
Սիրտս կրակով վառել են։
Քարար ալի, համ էլավ,
Արյուն Լկավ դում էլավ,
Աստված սիրեք ճար արեք,
Յարս ուտեղ դում էլավ։
Առել են, տարել են,
Սիրտս կրակով վառել են։

73. ԾԱՌԸ ԵՍ ԵՄ

Ծառը ես եմ, բարը դու ես
Անուշ շան,
Իմ ղովեկի յարը դու էս,
Քե ղուրբան։
Գնա, արի, հեաիդ եմ,
Ծառը ես եմ, բարը դու ես,
Անուշ ջան,
Ալ խնձոր եմ, ջերիդ եմ,
Իմ ղովեկի յարը դու էս,
Քե ղուրբան։

74. ՅԱՐՍ, ՅԱՐՍ

Կանչում եմ՝ արի՛, արի՛,
Յարը՛ս, յարը՛ս
Բալքի աստված կատարի,
Վառիր ջանըս։
Աև օձը մովի քոքին,
Յարը՛ս, յարը՛ս,
Գեշը սիրունի կողքին,
Վառիր ջանըս։
Արաղը շատացել ա,
Յարը՛ս, յարը՛ս,
Ճամփեքը վատացել ա,
Վառիր ջանըս։
Յարս անցավ մեր դոնից,
Յարը՛ս, յարը՛ս
Բռնած ուրիշի կոնից,
Վառիր ջանս։

75. ՕՍԱՆ ՋԱՆ

Օսան ջա՜ն, արի ասնեմ,
Տանեմ բաղդադի առնեմ։
Էրթանք սար, բռնենք յայլեն,
Օսան ջա՜ն, արի ասնեմ,
Ընչի՞ չես դա մեր մայլեն,
Տանեմ բաղդադի առնեմ։
Օսան ջա՜ն, բաղովն տրի,
Օսան ջա՜ն, արի ասնեմ,
Շամամի թաղովն արի,
Տանեմ բաղդադի առնեմ։
Սարի գլուխ դուման էր,
Օսան ջա՜ն, արի տանեմ,
Իմ շանը քեզ ղուրբան էր,
Տանեմ բաղդադի առնեմ։

76. ՀՈՌՈՄ, ՀՈՌՈՄ

Աղջի Հոռոմ, հոռոմել ա յարս,
Վարդը ձեռին թոռոմել ա յարս։
Աղջի Հոռոմ, հարսանիք ես դնացել,
Տոլմա չկա, սոված ես մնացել։
Աղջի Հոռոմ, դրողը քեզ տանի,
Արժան չէլար մի քթոց դարմանի։
Աղջի Հոռոմ, կերածդ ձավար ա,
Հողը գլխիդ առածդ տավար ա։
Հոռոմ, Հոռոմ, հոռոմել ա յարս,
Վարդը ձեռին թոռոմել ա յարս։

77. ԱՂՋԻ, ԷՐՆԵԿ

Աղջի, էրնեկ ալ ըլնեմ,
Թշիդ վրեն խալ ըլնեմ,
Գովքդ անեմ աշխարքին,
Սարոցի նման հալ ըլնեմ։
Ալ ըլնեմ, խալ ըլնեմ,
Թել-թել ըլնեմ շալ ըլնեմ,
Գովքդ անեմ աշխարքին,
Սարոցի նման հալ ըլնեմ։
Աղջի՛, աղջի՛, դու սիրուն,
Էրնեկ կաամ քու սիրուն,
Դե շուտ արի մեր բաղը,
Պոկենք շամամի թաղը։

### 78. ԱՌՎԻ ՎՐԵՆ

Աղջի ինչ լավ սազ ունես,
Առվի վրի նավն ա,
Կաքավի փարվազ ունես,
Նոր ես սիրել, լավն ա։
Աղջի, արի մեր բաղը,
Առվի վրի նավն ա,
Շախով կանչենք մեր խաղը,
Նոր եմ սիրել, լավն ա։
Աղջի, արի մեզ քաղհան,
Առվի վրի նավն ա,
Երեսդ գյունարախան,
Նոր եմ սիրել, լավն ա։
Աղջի, անունդ ասա,
Առվի վրի նավն ա,
—Անունս Անախաս ա,
Նոր եմ սիրել, լավն ա։
Աղջի, դու ի՞նչ լավ բան ես,
Առվի վրի նավն ա,
Ինձի մաահան չանես,
Նոր եմ սիրել, լավն ա։
Սիրել եմ սեր ու սավդով,
Առվի վրի նավն ա,
Ալամ—աշխարքի ղայդով
Նոր եմ սիրել, լավն ա։

### 79. ԳՅՈՒԼ ՆՈՒԲԱՐԻՆ

Բամրակի ակին Գյուլ-Նուբարին,
Յա՛ր, յա՛ր,
Սիրել եմ, Թաղա Նուբարին,
Յա՛ր, յա՛ր։
Ջանաք անենք, չանաք անենք,
Յա՛ր, յա՛ր,
Բարդաններով բամրակ հանենք,
Յա՛ր, յա՛ր։
Թալա յարին Գյուլ-Նուբարին,
Յա՛ր, յա՛ր,
Սիրել եմ Թազա Նուբարին,
Յա՛ր, յա՛ր։
Փեշդ բռնի բամրակ հանենք,
Յա՛ր, յա՛ր,
Բարղաններով մեր տուն տանենք
Յա՛ր, յա՛ր։
Բամրակի ակին, Գյուլ-Նուբարին,
Յա՛ր, յա՛ր,
Սիրել եմ Թազա Նուբարին,
Յա՛ր, յա՛ր։

### 80. ՑՈԼԱԼՈՎ

Ցոլալով, յար ջան, արի,
Թե չես գա, մուխդ մարի։
Ծառիս տակը կանաչ ա,
Ցոլալով յար ջան արի.
Աղջիկ տղին ճանաչ ա,
Թե չես գա, մուխդ մարի։
Ջուրա արավ, ջուրը սառավ,
Ցոլալով յար ջան արի,
Իմ յարը տուն չը դառավ,
Թե չես գա, մուխդ մարի։
Ծառի վրեն ղուշ էլավ,
Ցոլալով յար ջան արի,
Խմածդ անուշ էլավ,
Թե չես գա, մուխդ մարի։

### 81. ԳՅՈՒԼԱ, ԳՅՈՒԼԱ

Գյուլա՛, գյուլա՛,
Գյուլփերի Մարոյին,
Ադեին ասա,
Լավ պահի յարոյին։
Գյուլա՛, գյուլա՛,
Գյուլըս Գյուլեցի ա,
Քեզի մեռնեմ,
Յարըս լոռեցի ա։
Գյուլա՛, գյուլա՛
Գյուլփերի Մարոյին,
Ադեին ասա,
Լավ պահի յարոյին։

### 82. ԼՈՒՍՆԱԿԸ

Լուսնակը կեռ ու կամար,
Աղջի վառա քեզ համար,
Ցամա՞ն, էրվում եմ։
Լուսնակ պաաին թառել ա,
Սերը ինձի վառել ա,
Ցամա՞ն, էրվում եմ։
Լուսնակ գիշեր հով կանի,
Իմ քունը ո՞նց կտանի,
Ցամա՞ն, էրվում եմ։
Բաղումս վարդ եմ ցանել,
Քեզ համար ղարդ եմ արել,
Ցամա՞ն, էրվում եմ։
Լուսնակի շողին նայեմ,
Յարիս կարոտ կքաշեմ,
Ցամա՞ն, էրվում եմ։
Կանաչ արտն արոտ ա,
Սիրտս էրված յարոտ ա,
Ցամա՞ն, էրվում եմ։

### 83. ՍԻՊՏԱԿ ՂՈՋԸ

Սպիտակ ղոչը մատաղ կանեմ,
Աղջի ջան, քեզ ղոնաղ կանեմ,

Թաքլի դու ինձ մի «ջան» ասա,
Թե չէ աշխարն ավեր կանեմ։
Սևիկ աչեր, սևիկ աչեր,
Տունրս քանդիք կամար ունքեր։
Ով որ մեզի կրասրասե,
Թող սաղ տարին հիվանդանա։
Քամին եկավ, յանա, յանա,
Քամին աա քո դոշը բանա,
Սևիկ-աչեր, սևիկ աչեր,
Տունս քանդիք կամար ունքեր։

## 84. ԱՂՋԻ ԹԵԼԼԻ

Աղջի Թելլի դուս մի էլնի, կսեննաս,
Բոյդ կարճ ա, լոթու խարջ ա, կսեննաս։
Մալուլ, մալուլ ման ես գալի մայլեքր,
Կվախենում քեզ փախցնեն դյադեքը։
Աղջի, Թելլի դուրս մի էլնի, կսեննաս,
Բոյդ կարճ ա, լոթու խարջ ա, կսեննաս։
Աղջի Թելլի արեն առավ սարի տակ,
Քեզ մեռնեմ, սերդ անուշ ա ջլի տակ։
Աղջի Թելլի ընչի՞ կերար կաթի տակ,
Ուրիշին առար, ինձի թողիր դարդի տակ։
Մալուլ, մալուլ ման ես գալի մայլեքր,
Վախենում եմ քեզ փախցնեն դյադեքը։

## 85. ՏԻԿ-ՏԻԿ

Ա՜խ, տիկ, տիկ, վա՜խ տիկ, տիկ,
Ջա՜ն տիկ, տիկ, ակճոր,
Առանցի քեզի, հայ չունեմ մի օր։
Ձեռքս ես կառնեմ դլնու ակճորը,
Լցնեմ բակալը, լցնեմ իմ փորը,
Ա՜խ, տիկ, տիկ, ջան տիկ, տիկ
Վա՜խ, տիկ, տիկ, ակճոր,
Առանցի քեզի կյանք չունեմ մի օր։
Երազում տեսա պատկերդ տիկ, տիկ,
Կարծեցի կյանքում ես եմ երջանիկ,
Բաժակում տեսա քու լուս պատկերը,
Կարծեցի ես եմ աշխարքի տերը։
—Ա՜խ, տիկ, տիկ...
Գարբիեյր որ դա, թե հոգիս առնի,
Ամոթ է. ամոթ, հարբած չաեսնի։
Ա՜խ տիկ, տիկ, ջա՜ն տիկ, տիկ,
Վա՜խ, տիկ, տիկ, ակճոր,
Առանցի քեզի խավար է իմ օր։

## 86. ՁԵՐ ԲԱՂԻ ԴՈՒՌԸ

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներդ շաղով թաց ա,
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը լաց ա։
Դուշ մի դառնա թեավոր,
Դու խաղ կանչի ձիավոր,
Էրնեկ կտամ էն օրին,
Որ դաս մեր տուն թագավոր։
Ոսկի մատնիք մատներիդ,
Շողերն ընկան էրեսիդ,
Աքլոր չուտով մի կանչի,
Անքուն կանես իմ յարին։

## 87. ԳՅՈՒԼԻ ՋԱՆ

Գյուլի ջա՜ն, ֆայտոն ղանիթ կանեմ,
Քեզ Երեան, Թիֆլիզ, Բաքու տանեմ.
Յանա՛, յանա՛, էտ էլ բախտի բան ա։
Ալ բլուզդ կարեմ, շալ բլուզդ կարեմ,
Քեզի մեռնեմ վրեն ատլաս շարեմ։
Գյուլի ջա՜ն, շատ մի ցանի բամբակ,
Կերթամ, Թիֆլիզ վրեդ կուտամ ղանդաա։
Յանա՛, յանա՛, էս էլ բախտի բան ա։

## 88. ԻՆՁ ՈՒՆԵՐ

Ի՞նչ ուներ յարին,
Տուն չուներ յարին,
Ոտդ դիր քարին,
Առ սիրահարին։
Շաբաթան աղջիկ,
Օրորան աղջիկ,
Քո դեյրեն կարճ ա,
Շեկ տղի խարջ ա։
Իմ չինար յարին,
Մեկ ու ճար յարին,
Ոտդ դիր քարին
Առ սիրահարին։

## 89. ԱՂՋԻ ՋԱՆ

Ոտդ դրել ես թմբին,
Աղջի ջա՜ն,
Յար արի,
Ախպեր, մեռնեմ քու խմբին,
Աղջի ջա՜ն,
Յար արի։
Գնա, արի թող արա,
Թալան տղին դյող արա,
Ախպեր, հանաքիդ մեռնեմ,
Աղջի ջա՜ն,
Յար արի՛։
Ջերիդ դանակին մեռնեմ,
Աղջի ջա՜ն,
Յար արի։
Գնա արի թող արա,
Լոթի տղին գյող արա։
Հանդից ծաղիկ քաղեցի,
Աղջի ջա՜ն,

Յար արի,
Լոթի աղին ղաղեցի,
Աղջի ջա՜ն,
Յար արի։

### 90. ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ

Գնացել ես, էկել ես
Հայկանուշ,
Ուղուն բոյդ քոքել ես
Սիրանուշ,
Արմտդրաղի
Ջուխտ քոլիկը
էլան էր, թելան էր,
Խաթունարխի
Ջուխտ աղջիկը
Մարալ էր, ջեյրան էր։
Գնա արի մոտիդ եմ,
Հայկանուշ,
Ոսկի քյամար գոտիդ եմ,
Սիրանուշ,
Արմարաղի
Ջուխա քոլիկը
էլան էր, թելան էր,
Խաթունարխի
Ջոխա աղջիկը
Մարալ ու ջեյրան էր։

### 91. ԱՊԱՐԱՆԸ ՄՈՏԻԿ Ա

Ապարանը մոտիկ ա,
Իմ յարը խորոտիկ ա,
Ի՞նչ անեմ խորոտիկ ա,
Բոյիցը կոլոտիկ ա։
Ամպել ա, թոն չի գալի,
Անձրև ա, տուն չի գալի,
Ղարիբի օրը սև ա,
Աչքերը քուն չի գալի։
Ջինար ես, բոյիդ մեռնեմ,
Լավ յար ես, սոյիդ մեռնեմ,
Ջրլնի թե հեռանում ես,
Խոսաումդ մոռանում ես։

### 92. ԱՂՋԻ ՋԱՆ

Արև չեկած դու լուս ես,
Վարդանոցի նոր բուս ես,
Աշխարքումս գովական,
Դուն իմ յարն ես սիրական,
Աղջի ջա՜ն։
Արի մի վառի ինձի,
Արտով սիրում եմ քեզի,
Սիրած տղիդ խեղճ արի,
Աղջի ջա՜ն...

### 93. ԲՈՒՆԱ ՅԱՄԱՆ

Բունա յաման, ուզ օլդի
Շաքար ու ջան սուզ օլդի։
Ջեր դոնիցը աշել եմ,
Ջահել ջանս մաշել եմ,
Արի՜, արի՜, ջան աղա,
Քու կարոտը քաշել եմ։
էսօր բաղն ես գնացել,
Աառը ջրով լվացվել,
Արի՜, արի՜, ջան աղջիկ,
Քու ճամփիդ եմ մնացել։
Բունա յաման ուզ օլդի...

### 94. Ա՜Խ ԱՆՈՒՇ

Այսօր ախպուրն ես գնացել,
Աչքս ճամփիդ ա մնացել,
Ա՜խ, Անուշ,
Ջա՜ն, Անուշ,
Իմ աննման
Հայկանուշ։
Ախպրիակին կռնել ես,
Ախպրի թասը ռնել ես,
Ա՜խ, Անուշ,
Ջա՜ն, Անուշ,
Իմ աննման
Հայկանուշ։
Ջուլալ ախպուր, արծաթ թաս,
Թասը լցնես ինձի տաս,
Ա՜խ, Անուշ,
Ջա՜ն, Անուշ.
Իմ աննման
Հայկանուշ։

### 95. ԱԽ, ԵՐԱՆԻ

Ա՜խ երանի էն օրին,
Որ ես դտնեմ էն յարին,
Կյանքս նրան ղուլ անեմ,
Մատաղ կըլնեմ էն յարին։
էս իմ անրախտ օրերին,
Ման եմ գալի չոլերին,
Ջեռքես թռավ Աղավնին,
Ինձ համար էր թանկտղին։
Սար ու ձորեր անց կացա,
Յարըս ուր էր՝ չիմացա,
Սարեր, ձորեր ձեն ածեք,
Յարիս տեղը իմացեք։

### 96. ԱՊԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա

Ապարանը քարոտ էր,
Յար լե՜, յար լե՜,

Քարի տակը արոտ էր,
Յար լե՛, յար լե՛։
Էս ա յոթը տարի ա,
Յար լե՛, յար լե՛,
Ջուրն ախպոր կտրոտ ա։
Ապարան դար ու փոս ա,
Յար լե՛, յար լե՛,
Հավիա լատիկ բլուղ ա,
Յար լե՛, յար լե՛։

## 97. ԵՍ ՊՈՒՃՈՒՐ

Ես պուճուր, յարս պուճուր,
Արևիդ մեռնեմ,
Ո՞վ կտա մեզ հաց ու ջուր,
Բարեդ կառնեմ։
Արևիդ մեռնեմ,
Յար ջա՛ն,
Բարեդ կառնեմ,
Յար ջա՛ն,
Սիրել եմ կառնեմ։
Կրակը շաղ ես արել,
Արևիդ մեռնեմ,
Ինձ բեզարմաղ ես արել,
Բարեդ կառնեմ։
Արևիդ մեռնեմ,
Յար ջա՛ն,
Բարեդ կառնեմ,
Յար ջա՛ն,
Սիրել եմ կառնեմ։
Գնա՛, գնա՛, գալիս եմ,
Արևիդ մեռնեմ,
Սերս սրտիդ տալիս եմ,
Բարեդ կառնեմ։
Արևիդ մեռնեմ,
Յար ջա՛ն։

## 98. ՅԱՅԼԻ

Իմանաս, ուր եմ հասել,
Ամա՛ն, ամա՛ն յարո ջան
Ճամփեդ, շատ եմ սպասել,
Սևիկ-սիրուն Մարո ջան։
Հենց որ կպնի արևը,
Ամա՛ն, ամա՛ն յարո ջան,
Քեզի ղրկեմ բարևը,
Սևիկ-մևիկ Մարո ջան։
Սարի ղոշին սեղ խոար,
Ամա՛ն, ամա՛ն յարո ջան։
Քաշեմ յարի կարոտը,
Սևիկ-մևիկ յարո ջան։
Սարվորը սարով գնաց,
Ամա՛ն, ամա՛ն յարո ջան։
Իմ յարը խռով մնաց,
Սևիկ-սիրուն Մարո ջան։

## 99. Ա՛Յ ԱՂՋԻ...

Պուճուր առուն ջուր կուգա,
Աղջիկ տղին դուր կուգա,
Ա՛յ աղջի,
Քու դարդիցը,
Ջա՛ն աղջի,
Քու սավդիցը,
Ջուրն ընկնեմ
Բալկոնիցը։
Բարակ առուն գալիս ա,
Աղջիկ նստել լալիս ա։
Ա՛յ աղջի,
Քու դարդիցը,
Ջա՛ն աղջի,
Քու սավդիցը,
Ջուրն ընկնեմ
Բալկոնիցը։
Մի՛ լար, մի՛ լար ա՛յ աղջիկ,
Հրես յարդ գալիս ա
Ա՛յ աղջի,
Քու դարղիցը,
Ջա՛ն աղջի,
Քու սավղիցը,
Ջուրն ընկնեմ
Բալկոնիցը։

## 100. Ա՛Յ ՍԵՎ ԱՄՊԵՐ

Այ սև ամպեր, հեռացեք,
Իմ յարին ճամփա բացեք,
Յար յարի հետ խոսելիս,
Անկաշ ղրեք իմացեք։
Սև ամպերը պարզում չեն,
Սպիտակ այլուխը սաղում չի,
Յոթը սարի ալ հաղնեմ,
Սիրտս սև ա, սաղում չի։
Ձին ա գալի վերևից,
Ջուր ա կաթում տերևից,
Կարմիր օրս սևացավ,
Բեքախտ յարի էրեսից։
Կայնել ես կաժ կմանես,
Արեգակին նման ես,
Վեր կաց մոտիցս գնա,
Ինձի խելքից կհանես։

## 101. ՅԱՐ ԳՅՈՒԼԱ

Յար գյուլա...
Յարս կայնել ա շոշին,

Ջա՛ն, յարո ջան,
Մեգալները գոշին։
Յար գյուլա...
Էրթանք մեր կալերը,
Դուխի շաղ տամ,
Պենջակիղ ծալերը։
Յար գյուլա...
Պարախոզը գնաց,
Ջա՛ն, յարո ջան,
Յարիս բարեը մնաց։

## 102. ԱՂՎԵՍ ՊԱՌԿԵՑ

Աղվեսը պառկեց աղրի տակին,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Աչքը գցեց հավի ձագին,
Վո՛ւյ, վո՛ւյ։
Նետով կտամ աչքի տակին,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Որ մոտ չգա նա մեր բակին,
Վո՛ւյ, վո՛ւյ։
Աղջի՛, արի, հորթին ջուր տուր,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Քեզ կպատվեմ մեղր ու կարագ,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Համ աիրացու, համ սարկավագ,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Ոտներ ունես հավաք-մավաք,
Վո՛ւյ, վո՛ւյ։
Կատուն սատկեց, ափսոս ու վախ,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Մկներն էսօր շատ են ուրախ,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Մին էլ աեղից հենց վեր կացավ,
Վո՛ւյ, վո՛ւյ,
Մկանց կանի թողտթաթուխ,
Վո՛ւյ, վո՛ւյ,

## 103. ԱԾԵՑԵՔ ԹԱՌԸ...

Ի՞նչ եք մտածում,
Ոսկի եք դիզում,
Էս լեն աշխարքում,
Ի՞նչ եք երազում։
Ածեցեք թառը,
Մորթեցեք գառը,
Գինու տակառը,
Շատ լավ բան է։
Ի՞նչ եք շատ քնում,
Շուտ չեք վեր կենում,
Երկար քնելուց
Ի՞նչ եք հասկանում։
Քեֆը լավ բան է,
Բոլորի համար,
Աշխարքում հավասար։
Ածեցեք թառը,
Մորթեցեք գառը
Գինու տակառը,
Շատ լավ բան է։

## 104. ՅԱՄԱ՛Ն, ՅԱՄԱ՛Ն

Յամա՛ն, յամա՛ն, վառա ես,
Քեզի տեսա գառա ես։
Ֆայտոն նստել ման կուգաս,
Յամա՛ն, յամա՛ն, վառա ես,
Խալին գցեմ յան կուգաս
Քեզի տեսա ղառա ես։
Գութանս քարին առավ,
Յամա՛ն, յամա՛ն, վառա ես,
Յարս գնաց չգառավ,
Քեզի տեսա գառա ես։
Էլնեմ սրեմ մանգաղը,
Յամա՛ն, յամա՛ն, վառա ես,
Էրթանք մեր սարի բաղը,
Քեզի տեսա վառա ես։

## 105. ԸԼՆԵՆՔ ՍԱՐԸ

Ըլնենք սարը,
Բռնենք՝ բոլորի պարը,
Սարե՛ր, եղ գնացեք,
Տեսնեմ իմ յարը։
Բամրակ եմ ցանել՝ ղող ա,
Ըլնենք սարը,
Բռնենք՝ բոլորի պարը,
Յար եմ ճարել թաղա ա,
Սարե՛ր, ղեն գնացեք,
Տեսնեմ իմ յարը։
Արա եմ ցանել ալա յա,
Ըլնենք սարը,
Բռնենք՝ բոլորի պարը,
Յարս թուրքի բալա յա,
Սարե՛ր, ղեն գնացեք
Տեսնեմ իմ յարը։

## 106. ԱՐԻ ՔԱՂԵՆՔ

Ի՞նչ բան ունես ղարգի հեա,
Դարգ ունեցող մարգի հեա,
Արի քաղենք սիրուն վարդ,
Ամոթ չի, որ անենք գարդ։
Էղ քու լուսնակ պատկերը,
Կեռ ու կամար ունքերը,

Ինձ խելքամաղ արել են,
    Խելքս գլխես տարել են։
Արի քաղենք սիրուն վարդ,
    Ամոթ չի, որ անենք դարդ։

## 107. ՔԵԼԻ ՅԱՐ ՋԱՆ

Քելե, յար ջան, քելե՜,
Մեր բաղի դուշը,
Մեղրել եմ կտրադր
Փաթթել եմ լոշը։
    Կանչում եմ՝ արի՜,
    Կանչում եմ՝ արի՜,
    Մոտս ման արի։
Քելե, յար ջան, քելե՜,
Էրթանք մեր կալը,
Ինչ սիրուն ա, յամա՜ն,
Էրեսիդ խալը։
    Կանչում եմ՝ արի՜,
    Կանչում եմ՝ արի՜,
    Օրն էլավ աարի։

## 108. ՄՏԱ ԷՍ ՏՈՒՆ

Մտա էս տուն, մտա էն տունը՝
    Մուխ էր,
Բոյդ ղարղու ղամիշ,
    Ունքերդ թուխ էր։
Ես ու յարս ջահել ենք,
    Մաա էս տուն, մտա էն տունը՝
    Մուխ էր,
Ուխտ ու պայման արել եմ,
    Բոյդ ղարղու ղամիշ,
Ունքերդ թուխ էր։
    Ես ու յարս մալական,
Մաա էս տուն, մտա էն տունը՝
    Մուխ էր,
Ըլնենք էրթանք Բիրական,
    Բոյդ ղարղու ղամիշ,
Ունքերդ թուխ էր։

## 109. ՄԵՐ ԲԱՄԲԱԿԸ

Մեր բամբակը, ձեր բամբակը,
Քալա էր, քալա էր,
Յար բռնելը, յար թողնելը,
Խաթա ու բալա էր։
Խաթունարխցիք շախով են,
Մեր բամբակը, ձեր բամբակը,
Քալա էր, քալա էր,
Սոխ ու բիբար ծախող են,
Յար բռնելը, յար թողնելը,
Խաթա ու բալա էր։
Ա՜յ ասում ա, ասում ա,
Մեր բամբակը, ձեր բամբակը,
Քալա էր, քալա էր,
Կարմիր դինին թասում ա,
    Յար բռնելը, յար թողնելը,
    Խաթա ու բալա էր։
Կարմիր դինին թափեցինք,
Խաթունարխցոնց խաբեցինք։

## 110. ԿԱՆԱՉ ՈՒ ԿԱՐՄԻՐ

Կանաչ ու կարմիր տերեը, տերեը,
Էրթանք սարի վերեը, վերեը,
Ղուշը թռավ էն սարից,
Կանաչ ու կարմիր տերեը, տերեը,
Խաբար բերեք իմ յարից։
    Բալքի նամակ ղրել տամ,
    Կանաչ ու կարմիր տերեը, տերեը,
    Էդվան ճամփեմ իմ յարին,
    Էրթանք մեր սարի վերեը, վերեը։

## 111. ԷՍ ԷԼ ԿՈՇԱ ՂԱՅԴԵՆ Ա

Թո՛ղ, թող թողը ըլնի,
    Էս էլ Կոշա ղայդեն ա,
Դուշմանի գյողը ըլնի,
    Կոշա աղի սովդեն ա։
Աղջի, արի մեր բաղը,
    Էս էլ Կոշա ղայդեն ա,
Շախով կանչենք են Դաղը,
    Կոշա աղի սավդեն ա։
Աղջի էրթանք մեզ քախան,
    Էս էլ Կոշա ղայդեն ա,
Էրեսդ գյունարախան,
    Կոշա աղի սավդեն ա։

## 112. ԹԵԼԼՈ

Աման Թելլո՜,
Թելլո՜ ջան, Թելլո՜,
Շիրին Թելլո՜,
Թելլո՜ ջան, Թելլո՜։
Ի՞նչ անկի ես,
Բար չունես, Թելլո՜,
Ի՞նչ ջահել ես,
Յար չունես Թելլո՜,
Լուսնակ պատին
Առել ա, Թելլո՜,
Աերդ ինձի
Վառել ա, Թելլո՜,
Ամա՜ն Թելլո՜,
Թելլո՜ ջան, Թելլո՜,
Սիրուն Թելլո՜,
Թելլո՜ ջան, Թելլո՜։

### 113. ԷՆ ԳՅՈՂԱԼԸ

Էն չեյրանը,
Էն սարալը,
Էն գյոզալը,
Բազումն ա։
Նազերդ,
Մազերդ,
Ինձ էրում ա,
Քո սերը։
Թալան եմ, թթի զուշ եմ,
Էն չեյրանը,
Էն մարալը,
Էն գյոզալը
Բազումն ա։
Քեզի համար անուշ եմ,
Մազերդ,
Նազերդ,
Ինձի էրում ա,
Քո սերդ։

### 114. ՄԱՅՐԻԿ ՋԱՆ

Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,
Քույրիկ ջան, Քուռն ընկնեմ,
Շեկ յարի դարդիցը։
Դու հանդը գնացիր,
Ես տունը մնացի,
Խաս բաղի վարդերեն
Մի փունջ կապեցի։
Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,
Քույրիկ ջան, Քուռն ընկնեմ,
Շեկ յարի դարդիցը։
Հանդեն դառա տունը
Քեզի չգտա,
Ա՜խ ու վա՜խ անելով
Խաս բաղչեն մտա։
Մայրիկ ջան, ջուրն ընկնեմ,
Քույրիկ ջան, Քուռն ընկնեմ,
Շեկ յարի դարդիցը։

### 115. Ա՜Յ ՍԻՐՈՒՆ

Ա՜յ սիրուն, ա՜յ սիրուն,
Կոզպեցի Մարան,
Դափին տվին, զուռնին ավին,
Կեսրանց տուն տարան։
Ման եմ գալի, յանա-յանա,
Ա՜յ սիրուն Մարան,
Յարիս տեղը ով կիմանա,
Կեսրանց տուն տարան։
Ա՜յ սիրուն, ա՜յ սիրուն,
Կոզպեցի Մարան,
Դաիին տվին, զուռնին տվին,
Կեսրանց տուն տարան։

### 116. ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ
(Կատակերգ ու պար)

Մարդը—Ա՜յ կնիկ, էլար,
Օ՜ր հարսնիք էկար,
Կովերն ի յարար,
Նախիրն ի սարա՞ր...
Կնիկը—Նախրչին կիդա,
Կովերն ի տանտ,
Տանա ու տանա,
Տանա ու ուտա։
Մարդը—Կնիկ, սուս էլի,
Խազեն դուս էլի
Քիչմ առեջ արի,
Օխչարն ի՞նչ էրիր։
Կնիկը—Ջորանն ի էկե,
Օխչարն ի սարե,
Տարե ու սարե,
Տարե ու կերե։
Մարդը—Օր էլար վազար
էդ ուրախ հարսնիք,
Ճտերն ի՞նչ էրիլ,
Ըսա, ա՜յ կնիկ։
Կնիկը—Ուրուրն ի էկավ,
Ճտերն ի տարավ
Տարավ ու սարավ
Տարավ ու կերավ։
Մարդը—Վա՜յ կնիկ, քոոցա,
Ճժերն ի մոոցա
Օր հետդ ի չասիր՝
Ճժելն ի՞նչ էրիր։
Կնիկը—Ճժերն ի լացին,
Լացին ու լացին,
Լացին ու լացին,
Տեղեսաեղ մացին։
Ես լե լացեցի,
Արցունք թափեցի,
Էկա խարսնատուն,
Փչում խաղացի
Սիրաս ի րացեցի։

### 117. ԳՅԱՄԻՆ ՀԱՍԵ....

Գյամին հտսավ ծովի կեսը,
Խումար աղջիկ արի դեսը,
Քեզ սիրել եմ տարու կես,
Քեզ կպահեմ վարդի պես։
Ղամշե դաալ եդի մեջ,

Դու մի խատ ես գեղի մեջ,
Իմ տունը լեն մեյդան ա,
Մի յար ունեմ ջեյրան ա։

## 118. ՉԻԹ ՄԻՆԹԱՆԵԴ

Չիթ մինթանեդ կարել ես,
Դոշին սադաֆ շարել ես,
Էլ անունս չես տալի,
Չեղնի՞ լավը ճարել ես։
Ջուրն ընկավ բարակ առուն,
Աչքս մնաց քու գալուն,
Նստի գնաց, քիչը մնաց,
Համբերեն հարի գարուն։

## 119. ԱՂՋԻ ՀԱԳԻՆԴ

Աղջի հագինդ չիթ ա,
Քեզ կուզեմ՝ մերդ չի տա,
Չի տալի, հեչ էլ չտա
Ինձնից լավին հո չի տա։
Ա՜խ իմ անուշիկ յար ջան,
Լեզուդ դառել ա մարջան։
Աղջի, անունդ Թամար,
Աչքդ թուխ, ունքդ կամար,
Կբերեմ սակե քամար,
Քու բարակ մեջքի համար
Ախ, իմ անուշիկ յար ջան։
Լեզուդ դառել ա մարջան։

## 120. ԷՍ ԳԻՇԵՐ ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ

Էս գիշեր լուսնակ գիշեր,
Ես աչեր, կարմիր թշեր,
Դոշդ դեմ արա հովին,
Քամին տա դոշիդ մովին։
Առավոտ բարի լուսին,
Յարս կերթար սափորն ուսին,
Դեմ արա դոշդ հովին,
Քամին տա դոշիդ մովին։
Ալ ու ալվան ծաղիկ ես,
Ինձ համար աղունիկ ես։
Դեմ արա դոշդ հովին,
Քամին տա դոշիդ մովին։

## 121. ԱԽՊԵՐ ՋԱՆ

Շալ բուրդ կարել եմ,
Ախպե՜ր ջան,
Կոճակները շարել եմ,
Քեզ ղուրբան։
Բոլոր լուսնակ ես դառել,
Ախպե՜ր ջան,
Վարդ, մանուշակ ես դառել,
Քեզ ղուրբան։
Սարի տակին արոտ ա,
Ախպե՜ր ջան,
Քուրն ախպորը կարոտ ա,
Քեզ ղուրբան։

## 122. ԹՈՒԽ ԿՈՆԵՐԴ

Թուխ կոներդ կարմիր մարջան,
Կարմիր մարջան, յար ջան։
Դու չոռ ասա,
Ես կասեմ ջան,
Շարմաղ մատիդ
Մատնիք շարեմ,
Խաս մինթանիդ
Ալմաստ կարեմ։

## 123. ՎԱԽ, ՍԻՐՈՒՆԻԿՍ

Ատում էիր, սիրեցիր,
Սիրում էիր, ատեցիր,
Ինձ նման ջահել տղին
Դու անդանակ արեցիր։
Վա՜խ, սիրունիկս,
Էրվում եմ,
Ա՜ման, ա՜ման, էրվում եմ
Էդ քո սիրով վառվում եմ։
Վարդ ցանեցի, փուշ էլավ,
Քյաֆուր յարի թուշ էլա,
Չէ որ գրկած բարեդ,
Շաքարից անուշ էլավ։
Վա՜խ, սիրունիկս,
Էրվում եմ,
Ա՜ման, ամա՜ն էրվում եմ,
Էդ քո սիրով վառվում եմ։

## 124. ԱՐԵՎՈՒԴ ՄԵՌՆԵՄ

Քթկալը ճիտս եմ գցել,
Արևուդ մեռնեմ,
Շեկ յարը միտս եմ գցել,
Բարեդ կառնեմ։
Հասել եմ Ալագյազը,
Արևուդ մեռնեմ,
Հագել եմ ալ-ատլասը,
Բարեդ կառնեմ։
Ես ու յարս ջահել ենք,
Արևուդ մեռնեմ,
Ուխա ու պայման արել ենք,
Բարեդ կառնեմ։
Ես ու յարս մալական,
Արևուդ մեռնեմ,
Ըլնենք, էրթանք Բիրական,
Բարեդ կառնեմ։

### 125. ՉԻՆ, ՉԻՆ

Չի՜ն, չի՜ն, չին բըլուզդ կարել եմ,
Հոգուդ մեռնեմ, յախեղ սադաֆ
Կոճակները շարել եմ։
Կտրել եմ Արազի րուզը,
Չի՜ն, չի՜ն, չին բըլուզդ կարել եմ,
Թափ տամ քյաքյուլիդ թոզը,
Հոգուդ մեռնեմ, յախեղ սադաֆ
Կոճակները շարել եմ։
Արազը րուզ ա րոնել,
Չի՜ն, չի՜ն, չին բըլուզդ...
Քաքուլդ թոզ ա րոնել
Հոգուդ մեռնեմ, յախեղ սադաֆ
Կոճակները շարել եմ։
Արազը հեշաացել ա,
Չի՜ն, չի՜ն, չին բըլուզդ...
Ժամփեզր կոշտացել ա,
Հոգուդ մեռնեմ, յախեղ սադաֆ
Կոճակները շարել եմ։

### 126. ԵՐԻ, ԵՐԻ

Լուսնակը կեռ ու կամար,
Երի, երի յանդըմ օ՜յ, օ՜յ,
Նախշուն զռափկն ինձ համար
Յանդըմ, շեկո ջան։
Լուսնակ գիշեր, հով գիշեր,
Երի, երի յանդըմ, օ՜յ, օ՜յ,
Աե աչեր, կարմիր թշեր,
Յանդըմ, շեկո ջան։
Գուցինք հանդեր, րոնինք լոր,
Երի, երի յանդըմ օ՜յ, օ՜յ,
Աղջիկ աեսանք յայլի ձոր,
Յանդըմ, շեկո ջան։
Կանաչ բաղի բար ունեմ,
Երի, երի յանդըմ օ՜յ, օ՜յ,
Քեզնից լավիկ յար ունեմ,
Յանդըմ, շեկո ջան։

### 127. ՕՍԱՆՆԱ

Օսաննա՜, երի, երի Օսաննա՜,
Չինար բոյդ դովելի, քո յարն ա,
Օսանի ձևոքի շալը Օսաննա՜,
Արի, էրթանք մեր բաղը, Օսաննա՜,
Օսաննա՜, երի, երի Օսաննա՜,
Չինար բոյդ գովելի, քո յարն ա։
Աարի աակովը գնաց, Օսաննա՜,
Քու յարը խռով մնաց, Օսաննա՜,
Օսաննա՜, երի, երի Օսաննա՜,
Չինար բոյդ դովելի, քո յարն ա։
Մատնիքդ մատովդ չի, Օսաննա՜,
Մաշիկդ ոտովդ չի, Օսաննա՜։
Օսաննա՜, երի, երի Օսաննա՜,
Չինար բոյդ գովելի, քո յարն ա։

### 128. ՄԱՐԱԼԻ ՊԵՍ

Մարալի պես ման ես գալի,
Որսորդի ձեռից փախած ես,
Ով քեզ աշե,
Ա՜խ, կքաշե,
Ա՜խ սիրուն ազունակ,
Անուշախոս սոխակ,
Երկնային արուսյակ։
Լե՜, լե՜, լե՜,
Ա՜խ սիրուն ազունակ,
Անուշախոս սոխակ։
Լե՜, լե՜, լե՜,
Կաքավի պես ձեն կհանես,
Սիրտս քեզ հետ կտանես,
Ով քեզ աշե,
Ա՜խ, կքաշե,
Ա՜խ սիրուն ազունակ,
Անուշախոս սոխակ,
Երկնային արուսյակ։
Լե՜, լե՜, լե՜։

### 129. ՋԱՆՈ ՋԱՆ

Ծակտիդ ոսկի կշարեմ,
Ջանո ջան,
Մախմուռ դնյրա կկարեմ,
Ջանո ջան,
Ասա՝ հա՛,
Ասա՝ հա՛,
Ջանո ջան,
Իմը դուն ես,
Էլ ի՞նչ կուզես,
Ջանո ջան։

### 130. ԱՍԿՅԱՐ ՈՒ ՍԵՅՐԱՆ

Ասկյար ու սեյրան ու յար,
Մարալ ու ջեյրան ու յար։
Ոչխարը հանդեն հանեմ,
Ասկյար ու սեյրան ու յար,
Խազ կանչելով տուն տանեմ,
Մարալ ու ջեյրան ու յար։
Գութանը վարի՜, վարի՜,
Ասկյար ու սեյրան ու յար,
Իրիկունը տուն արի,
Մարալ ու ջեյրան ու յար։
Բարդու ծառը բանցր ա,

Ասկյար ու սեյրան ու յար,
Հոռովելդ քաղցր ա,
Սարւալ ու չեյրան ու յար։

## 131. ՀԱՆԱՔՆԵՐ

Շըր՛րփ, Թըր՛րփ մաղաղին,
Շրր՛րփ, Թրր՛րփ մաղաղին,
Տաչորս շահին, արասին,
Ծախեց ավեց րոզաղին,
Էլ ի՞նչ մնաց Հայկաղին։
Աղեն մածուն մերել ա,
Փեսի փայը պահել ա,
Անտեր մնար չալ կատուն,
Կերավ փեսի փայ մածուն։
Շրր՛րփ, Թրր՛րփ մաղաղին,
Տաչորս շահին, արասին
Ծախեց ավեց րոզաղին,
Էլ ի՞նչ մնաց Հայկաղին։
Թավեն ծակ ա, եղ չկա,
Թաղա փեսին աեղ չկա,
Փեսին շաա էրես մի աա,
Փեսին էյթիրար չկա։
Շրր՛րփ, Թրր՛րփ մաղաղին,
Տաչորս շահին, աբասին,
Էլ ի՞նչ մնաց Հայկաղին։
Ծախեց ավեց րոզաղին։
Քավոր աղեն խարել ա,
Մեր Թամադեն հարրել ա,
Գինին րեղին Թափել ա,
Գինին ղավով կոնծել ա,
Գինու ղավը կործել ա։
Շըր՛րփ, Թըր՛րփ մաղաղին,
Տաչորս շահին, արասին,
Էլ ի՞նչ մնաց Հայկաղին
Ծախեց, ավեց րոզաղին։

## 132. ՔԱ ԿՆԻԿ

Մածուն կուզեմ՝ Թան կրերես,
Քա՛ կնիկ,
Քո խոր խերն անիծած,
Ալըըի մաղով ցան կրերես,
Քա՛ կնիկ,
Քո խոր խերն անիծած,
Գեշ կնիկ,
Դու ղեախնը մտնես,
Ղայդով կնկան հեյրան ըլնես։
Ծուռ ոտներիդ մաշիկ կուզես,
Քա՛ կնիկ,
Քո խոր հերն անիծած,
Ծուռ մատներիդ մատնիք կուզես,
Քա՛ կնիկ,
Քու խոր խերն անիծած։
Գեշ կնիկ,
Դու գետինը մտնես,
Ղայդով կնկան հեյրան ըլնես,
Ղայդով կնկան հեյրան ըլնես։

## 133. ՀԱՄ ԴՈՒ ՎԱՌԱՐ

Կարմիր վարդի փուշ էլա,
Կապուտ դարդի Թուշ էլա,
Համ դու վառա՛ր
Համ դու վառար,
Յարո ջան,
Համ ինձ չառար,
Ջանո ջան,
Համ ինձ չառար։
Հանդեն էկա, տուն մաա,
Յարիս տանը չդաա,
Համ ես վառա,
Յարո ջան,
Համ քեզ չառա,
Ջանեջան,
Համ քեզ չառա։

## 134. ԱՂՋԻ ՄԱՐԱՆ

Աղջի մարան,
Հարսնիք ես գնացել,
Տոլմա չկա,
Առված ես մնացել։
Բա չեք ասի,
Մարանը էկել ա,
Հարսի շորեր
Կարել ա, հաքել ա։
Աղջի Մարան,
Համամ ես գնացել,
Տաք շուր չկա,
Կեղտոտ ես մնացել։
Բա չեք ասի,
Մարանին ասրել ենք,
Դուշմանի,
Աչքերը հանել ենք։

## 135. ՍԱԹՈՅԻ ԵՐԳԸ

Ես Աաթոն եմ էվջիլարցի,
Ոչ բարով րոստան պահեցի,
Անմեղ տեղը բսպանվեցի,
Զուլո՛ւմ էր, մայրիկ, զուլո՛ւմ էր։
Գյունարախանը ասլդա էր,
Բոստան պահելը սավդա էր,

Ռովելը «Ամերիկա» էր,
Ջուլո՛ւմ էր, մայրիկ, ղուլո՛ւմ էր։
Ննոք ապեր աստված սիրես,
Երեվանա բժիշկ բեբես,
Իմ ցավերը մեկ-մեկ դրես,
Ջուլո՛ւմ էր, մայրիկ, ղուլո՛ւմ էր։

## 136. ԵՍ ԱՂԵԿՆ ԵՄ

Ես եղեկն եմ չամոլեցի,
Մեկ ջիվան,
Խանում Եվա ջան, ջա՛ն,
Տանից Հանին տարան շուշի Երևան,
Խանում Եվա ջան, ջա՛ն,
Ես կերթամ լալով,
Լալով, ողբալով։
Սրի էրթանք քո մանդալած արաերը,
Խանում Եվա ջան, ջա՛ն,
Քեզ աեսա,
Թաղացան իմ դաբդերը,
Խանում Եվա ջան, ջա՛ն։
Դու կեցիր բարով,
Ես կերթամ լալով։

## 137. ԱՇԽԵՆ ՋԱՆ

Աշխենը նսաած էր,
Օթախը կար կտներ,
Մուկուշի դաբդերը,
Սրաին դաղ կաներ,
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ,
Օ՛յ օ՛յ, Աշխեն
Ջան, օ՛յ, օ՛յ։
Կանչե Հովիվ, կանչե,
Սարերն արոտ տ,
Ղարիբ ղարբաթ ընկած,
Սիրաս յարոտ ա,
Օ՛յ, օ՛յ, օ՛յ, օ՛յ,
Օ՛յ, օ՛յ, Աշխեն ջան, օ՛յ, օ՛յ։

## 138. ՔԱ ՏՂԱ ՔՅԱՄԱՐԻԴ

Քա տղա, քյամարիդ դորակը ոլորի,
Ինձի տեսար, սիրտդ փորիդ մոլորի։
Գդակդ ծուռն ես դրել,
Քա տղա, քյամարիդ դոբակը ոլորի,
Աչքդ մեր դուռն ես դրել,
Ինձի աեսար, սիրտդ փորիզ մոլորի։

## 139. ԼԱ՛Յ, ԼԱ՛Յ

Լա՛յ, լա՛յ, էդ քո բոյին մեռնեմ,
Շատ սիրուն ես՝ սոյիզ մեռնեմ,
Սիրել եմ սերով սավդով,
Լայ-լա՛յ, ես քո ջանին մեռնեմ։
Ալամ աշխարքի ղայդով,
Ես քո բերոդ նանին մեռնեմ,
Լա՛յ-լա՛յ, ես քո ջանին մեռնեմ,
Շատ սիրուն ես՝ սոյիդ մեռնեմ։

## 140. ԼԱ՛Յ, ԼԱ՛Յ, ՍՈՖԻԿ

Օլոր, մոլոր ծուռ ճամփեքով էկտ ես,
Քո նշանը իրա տեղը դտա ես,
Լա՛յ, լա՛յ, լա՛յ,
Լա՛յ, լա՛յ, Սոֆիկ լա՛յ, լա՛յ,
Լա՛յ, լա՛յ սիրուն լա՛յ, լա՛յ։
Շալ մինթանեդ խաս թելերով կարել եմ,
Սադաֆ կոճակ դոշիդ վրեն շարել եմ,
Լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ,
Լա՛յ, լա՛յ, Սոֆիկ լա՛յ, լա՛յ
Լա՛յ, լա՛յ սիրուն լա՛յ, լա՛յ։

## 141. ԿԱՅՆԻ, ԿԱՅՆԻ

Կայնի, կայնի դալիս եմ,
Յար, յաման, նանի ջա՛ն,
Ծափ տալիս եմ, լալիս եմ,
Յար, յաման, նանի ջան։
Կայնել ես կալատեղում,
Յար, յաման, նանի ջա՛ն,
Մի հաա ես մեր էս դեղում,
Յար, յաման, նանի ջա՛ն,

## 142. ՎԱՐԴԻ ԹՈՒՓԸ

Վարդի թուփը շաա ցածր ա,
Դե՛, սիրուն յար ջան, ե՛կ,
Դե՛, սիրուն յար ջան ե՛կ,
Սիրած յարը շաա քաղցր ա,
Ե՛կ, կարոաս առնեմ։
Բաղումս ունեմ յոթ բաղվանչի,
Դե՛, սիրուն յար ջան, ե՛կ,
Թութակն ածի ու խաղ կանչի,
Ե՛կ, կարոտս առնեմ։

## 143. ԷՐԹԱՄ ՆԱՆԻՍ...

Էրթամ նանիս տեսնեմ ու դամ,
Խաս մինթաննես հաղնեմ ու դամ։
Վա՛յ աո՛ւյ, աո՛ւյ,
Տո՛ւյ, աո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ,
Ջա՛ն, տո՛ւյ, սո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, սո՛ւյ...
Էրթամ նանիս ասեմ ու դամ,
Ջառ մաշիկս հաղնեմ ու դամ։
Վա՛յ, աո՛ւյ, աո՛ւյ...

### 144. ԱՐԱԶՆ ԱՆՑԱ

Արազն անցա, հեռացա,
Իմ աշխարհից վերացա,
Յոթը տարի մնացի,
Էլի քեզ չմոռացա։
Արազի ջուրը վարար,
Ուշքս քեզի հետ տարար,
Չես սր տխր, շուտ կգամ,
Քո խոսքին անտ չդառար։
    Նանա լա՛յ-լա՛յ էր ասում,
    Անուշ քունս էր տանում,
    Իմ յարը ղարիբ ընկած,
    Իմ քունը ո՞նց էր տանում։

### 145. ԿԱՐՄԻՐ ՄԱՐՋԱՆ

Կարմիր մարջան ախպեր ջան,
Դիլի՛, դիլի՛, Դիլիջան,
Ոսկե ֆինջան ախպեր ջան,
Դիլի՛, դիլի՛, Դիլիջան։
Խաճուճ դառ ես ախպեր ջան,
Դիլի՛, դիլի՛, Դիլիջան,
Վարդի ծառ ես, ախպեր ջան,
Դիլի՛, դիլի՛, Դիլիջան։
Մեղրի ծառ ես, ախպեր ջան,
Դիլի՛, դիլի՛, Դիլիջան,
Ալ խնձոր ես, ախպեր ջան,
Դիլի, դիլի, Դիլիջան։

### 146. ԲՈՒ ԼԵՅԼԻ

Մկներն տուիք են քանդում,
    Բու լեյլի,
Հարսները տուն չեն մանում,
    Բու լեյլի։
Էսօր օրը ջարոսթ ա,
    Բու լեյլի,
Յարս նողուլ-նարաթ ա,
    Բու լեյլի։

### 147. ԻՄԱՑԵԼ ԵՄ

Իմացել եմ նշանլու ես,
    Շեկլիկ յարո ջան,
Աշխարքումս իմը դու ես,
    Աղիզ Մարո ջան։
Վարդը թփիցը քաղում ես,
    Շեկլիկ յարո ջան,
Ինձնից թաքուն ծիծաղում ես,
    Աղիզ Մարո ջան։

### 148. ՇԱՔԱՐ-ՇԱՐԲԱԹՈՎ

Շաքար-շարբաթով,
    Անուշ ջան,
Նողուլ-նարաթով,
    Քեզ ղուրբան,
Քուրիկիս տարան,
    Անուշ ջան,
Սազ ու սուրաթով
    Քեզ ղուրբան։

### 149. ՔԱՂՀԱՆ

Քաղհան կանեմ ես հողին,
    Նանա՛յ, նանա՛յ, նանա՛յ,
Մենենեմ փլավ բերողին,
    Գյուլում, նանա՛յ, նանա՛յ։
Թաքուչակիս կեռ կոթը,
    Նանա՛յ, նանա՛յ, նանա՛յ,
Հրես եկավ կորկոտը,
    Գյուլում, նանա՛յ, նանա՛յ։
Թաքուչակիս ղլավը,
    Նանա՛յ, նանա՛յ, նանա՛յ,
Հրես եկավ փլավը,
    Գյուլում, նանա՛յ, նանա՛յ։

### 150. ՍԻՐՈՒՆ ՍՈՆԱ

Ինձի համար ղարղ մի արա,
    Սիրուն Սոնա,
Ես քո նազը, ոսկե սազը
    Չեմ մոռանա,
Քեզի տեսա բարի լուսին,
    Սիրուն Սոնա,
Կնմանիս բոլոր լուսին,
    Սիրուն Սոնա։

### 151. ՀՈ ՅԱՄԱՆ

Կաքավ ա կայնել քարին,
Հո՛, յաման,
Հո՛ յար ջան։
Կոկոում, կանչում յարին,
Չէ, յամա՛ն,
Օ՛, մարջան (2)։
Երկնքով անցավ ղազը
Հո՛, յաման,
Հո՛ յար ջան։
Ուստեն չալեց իր սազը
Չէ՛ յամա՛ն,
Հո՛, մարջան։

### 152. ԱՐԵՎՆ ԱՌԵ

Արեն առավ սարերովն,
Կաքավ թառավ քարերովն,

Առել են, վո՜ւյ, վո՜ւյ,
Վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ,
Տարել են, վո՜ւյ, վո՜ւյ
Վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ։
Լորիկ յարս տարել են,
Իմ ձեռքիցը առել են,
Աստված սիրեք, ճար արեք,
Սիրտս կրակով վառել են։
Առել են, տարել են,
Սիրտս կրակով վառել են։

## 153. ԱՉՔՍ ՄՆԱՑ

Աչքս մնաց
Էդ քու ճամփին,
Դուն չեկար, (2)
Ցարար աստված,
Ձեղնի ինձի մոռցար,
Ամա՜ն,
Մոռացար, ամա՜ն։
Արի, ամա՜ն, արի՛,
Իմ սիրելիս, արի՛։
Սարերն ընկե,
Էլ տուն չի ղա,
Իմ յարը, (2)
Ցարար, աստված,
Էլ ո՞նց կեդնի
Իմ ճարը, ամա՜ն,
Իմ ճարը, ամա՜ն,
Արի, աման, արի՛,
Իմ սիրելիս, արի՛։

## 154. ԱԼ ՁԻՆ ՀԵԾԱԾ

Ալ ձին հեծած ղալիս ես,
Ա՜յ հանղարա, հանղարա,
Քաղցր բարև տալիս ես,
Շա՜ին տվի տանձ ատ։
Ծով ես, ավաղիդ մեռնեմ,
Ա՜յ հանղարա, հանղարա,

## 155. ՁՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Անուշ գարուն ա արել,
Մեծ առուն ա վարարել,
Իմ յարն էլ տանից հեռու,
Հիմի նոր տուն ա դառել։
Ջա՜ն, ջա՜ն, դյուլում ջա՜ն,
Գյուլում, դյուլում, գյուլում, ջա՜ն։
Ամռան կարմիր արեր,
Ծառի կանաչ աերեր,
Հեռվից-հեռու կարոտով,
Առա յարիս բարեր։
Ջա՜ն, ջա՜ն, գյուլում ջա՜ն,
Գյուլում, գյուլում, գլուլում ջա՜ն։
Աշնան անուշ արեին,
Կարմիր խնձոր աերեին,
Կաց քաղեմ փեշս լցնեմ,
Ընծա տանեմ իմ յարին։
Ջա՜ն, ջա՜ն, գյուլում ջա՜ն,
Գյուլում, գյուլում, դյուլում ջա՜ն։
Ձմեռ ա, ձյուն ա էկել,
Իմ յարը տուն ա էկել,
Մոր կարոտը քաշելով,
Էլե՝ թաքուն ա էկել,
Ջա՜ն, ջա՜ն, գյուլում ջա՜ն,
Գյուլում, դյուլում, դյուլում ջա՜ն։

## 156. ԱՂՋԻ ԵՐԱՆԻ

Էս ինչ նախշուն կտոր ա,
Իսկը նորահարսի շոր ա,
Աղջի երանի
Աղջի երանի,
Ալ էլնեմ,
Աղջի երանի,
Աղջի երանի,
Թշիդ վրեն
Խալ էլնեմ։
Էդ ի՞նչ նաղ ա, անում ես,
Խելքս գլխես տանում ես,
Աղջի երանի,
Աղջի երանի,
Ալ էլնեմ,
Աղջի երանի,
Աղջի երանի,
Թշիդ վրեն
Խալ էլնեմ։

## 157. ՅԱՐ ԼԵ՜, ԼԵ՜

Սարեն իջավ ձիավոր,
Աաղմոսը ծոցին սավոր,
Յար, լե՜, լե՜, լե՜,
Յար, լե՜, լե՜, լե՜,
Հրես եկավ իմ ախպեր,
Երեք օրվա թաղավոր,
Յար, լե՜, լե՜, լե՜,
Յար, լե՜, լե՜, լե՜։
Յար ջան, մերդ մեռել ա,
Շորերդ կեղտոտել ա,
Յար, լե՜, լե՜, լե՜,
Յար, լե՜, լե՜, լե՜,
Լվանամ վարդի ջրով,
Չորացնեմ բերնիս դոլով,
Յար, լե՜, լե՜, լե՜...

### 158. ԳԵՂԻ ՄԵՋԸ

*Գեղի միջին մի հաա ես,*
*Ա՛յ աղջիկ քո դարդից,*
*Ի՞նչ անեմ,*
*Մի հատ ես, ոսկե հատ ես,*
*Արի տանեմ։*
*Ծիլ ու ծաղկում խաղում ես,*
*Ա՛յ աղջիկ քո դարդից,*
*Ի՞նչ անեմ,*
*Երեսիս ծիծաղում ես,*
*Արի տանեմ։*

### 159. ՀԵՅ, ՀԵՅ, ՋԱՆ (Ցայլի)

*Սար կա սարի նման չի*
*Հե՜յ, հե՜յ, ջա՛ն,*
*Նազ մի արա,*
*Յար կա՝ յարի նման չի*
*Մինթանով թոզ մի արա*
*Քո մերն ինձի հավան չի,*
*Հեյ՜, հե՜յ ջա՛ն,*
*Նազ մի արա,*
*Սերս սերի նման չի,*
*Մինթանով թոզ մի արա։*

### 160. ՀՐԵՆ ՖԱՅՏՈՆԸ

*Հրեն ֆայտոնը*
*Գալիս ա*
*Մարոն միջին*
*Լալիս ա,*
*Մի՛ լար, մի՛ լար*
*Մարո ջան*
*Հրես յարոն*
*Գալիս ա։*

### 161. ՍՈՆԵ ՋԱՆ

*—Սոնե ջա՜ն*
*—Հա՜ ջանեջա՜ն,*
*—Ես Սոնեյի*
*Սոյին մեռնեմ,*
*Նրա չիչմաա*
*Բոյին մեռնեմ։*
*—Սոնե ջան*
*—Հա՛, ջանեջա՜ն,*
*—Սոնե ջան,*
*—Հա՛, ջանեջա՜ն։*

### 162. ԴԼԵ ԼԵ ՋԱՆ

*Արի, յար ջան,*
*Արի, մոաիկ,*
*Հա դլե լե ջան*
*Լե ջան, լե ջան,*
*Քեզի կառնեմ*
*Կարմիր գոաիկ,*
*Հա դլե լե ջան*
*Ադրրեջան։*
*Դու նսաել ես*
*Երկանք կաղաս,*
*Հա դլե լե ջան.*
*Լե ջան, լե ջան*
*Թուխ ծամերիդ*
*Հեա կխաղաս,*
*Հա դլե լե ջան*
*Ադրրեջան։*

### 163. ԹԱԶԱ ՏԱՐԻ

*Սարերի կարմիր լալեն եմ,*
*Բարով եկար,*
*Հազար բարի,*
*Իմ մոր մինուճար բալեն եմ։*
*Խերով եկար,*
*Թազա աարի։*
*Թասը լցնեմ կարմիր գինով,*
*Բարով եկար,*
*Հազար բարի,*
*Փլավ բերեմ ոսկե սինով,*
*Խերով եկար,*
*Թազա աարի։*
*Ամբարս լցնեմ բերք ու բարի*
*Բարով եկար,*
*Հազար բարի,*
*Ալյուր, ցորեն, հաճար, գարի,*
*Խերով եկար,*
*Թազա աարի։*

### 164. ԼՈՒՍՆԱԿԸ ԱՄՊԻ ՏԱԿԻՆ

*Լուսնակը ամպի աակին,*
*Յա՜ր,*
*Ձեր աունը ճամփի աակին,*
*Յա՜ր,*
*Ես քեզ որտեղ սիրեցի,*
*Յա՜ր,*
*Ձեր բաղի ծառի աակին,*
*Յա՜ր։*
*Յար նա՜յ նա՜յ նա՜յ,*
*Յար նա՜յ նա՜յ նա՜յ (2)։*

### 165. ՏԻՐՈՒՆ ՋԱՆ

*Էդ պաղ ջրեն ինձի ջուր աուր,*
*Տիրուն ջան,*

Ղարիբ յարեն ինձի լուր տուր,
Սիրուն ջան,
Օ՜յ, օ՜յ,
Սիրուն ջան,
Օ՜յ, օ՜յ,
Ողխարը սարից գեղը բերի,
Տիրուն ջան,
էդ քո սերեն ինձ մի էրի,
Սիրուն ջան,
Օ՜յ, օ՜յ,
Տիրուն ջան,
Օ՜յ, օ՜յ, սիրուն ջան։

## 166. ՀԵՆՑ ՈՐ

Հենց որ բոլորի սարին,
Նամակ ճամփեմ իմ յարին,
Սիրունի՜կ,
Սիրունի՜կ,
Ծաղիկ ես,
Ինձ համար
Աղունիկ ես։
Առավոտ բարի լուս,
Գառներ սաննենք գարիգուս,
Սիրունի՜կ,
Սիրունի՜կ,
Ծաղիկ ես,
Ինձ համար
Աղունիկ ես։

## 167. ԷՆ ԻՆՉ ՕՐ ԷՐ

էն ի՞նչ օր էր,
Ա՜խ,
Որ քեզի տեսա,
Իմացա իմն ես,
Վա՜խ,
Մուրազիս հասա։
Կեռ-կեռ ունքերդ,
Ա՜խ,
Դանակ ես անում,
Ասես հոգուս հետ,
Վա՜խ,
Հանաք ես անում։

## 168. ԹԱՂԱ ՅԱՐԻՆ

Թաղա յարին,
Գյուլնուբարին,
Կարոտել եմ,
Իմ Դիլըարին։
Իմ Դիլըարին,
Մեկ ու ճարին,
էրթամ բերեմ
Գալող տարին։

## 169. ԱՐԻ ՅԱՐ ՋԱՆ

Արի, յար ջան, արի,
Ի՞նչ նազ ես անում,
Անուշ յար ջան,
Ի՞նչ նազ ես անում,
Ասլամ կաքավի պես,
Փարվազ ես անում,
Անո՜ւշ յար ջան,
Փարվազ ես անում։
Կայնի մի գնա,
Անուշ յար ջան,
Յարդ կմնա։
Բաղի դուռը բաց ա,
Ասւիրեն փռած ա,
Անուշ յար ջան,
Ասւփրեն փռած ա,
Խորովածն ու գինին
Մեջտեղ դրված ա,
Անուշ յար ջան,
Մեջտեղ դրված ա։
Կայնի մի գնա,
Անուշ յար ջան,
Յարդ կմնա։

## 170. Ա՜Խ, ՅԱՐՈ

Ա՜խ յարո, յարո ջան,
Ես քեզի ղուրբան,
Ես քեզի առնեմ ո՞ւր երթամ,
Մեկ տեղ չունիմ,
Որ հանգստանամ (2)։

## 171. ՈՒԼՈՒՂ ՊՈՒԼՈՒՂՈՎ

Գնացի սարը սնձի,
Ուլուղ-պուլուղով աղա,
Ռաքս առավ մի կնձի,
Կարմիր բլուղով աղա։
Երթիկ-երթիկ բռնել ես,
Ուլուղ-պուլուղով աղա,
Երթկասակին քնել ես,
Կարմիր բլուղով աղա։

## 172. ՈՒՌԻ ԵՍ

Ուռի ես՝ կեռանալ մի
Մեր ղոնեն հեռանալ մի,
Յար արեգ կսիրես,
Սիրում ես՝ մոռանալ մի։
էլի գալգ եմ իմացել,

Աչքս ճամփիդ է մնացել,
Քեզ համար դիշեր-ցերեկ,
Ա՛խ, անելով եմ մնացել։

## 173. ԲԱԼԿՈՆՈՒՄԸ

Բալկոնումը կայնել ես,
Վարդի նման բացվել ես,
Մտիկ չես աա իմ հալին,
Մատադ թշիդ ջուխա խալին։
    Աստված սիրես,
    Կրակովդ ինձ մի էրի։
    Աստված սիրես,
    Դարդ ու ցավեր էլ մի բերի (2)։

## 174. ԱՅ ՍԱՐԵՐ

Ա՛յ սարեր, թփեր,
Ա՛յ ձոր, ա՛յ ճամփա,
Ասեք յարիս,
Մթնել ա, թող տուն գա,
Յարալու սիրաս մի քիչ թող թնդա։
    Անուշ յար, դե արի,
    Արտերից տուն արի,
    Ճամփեքը կանաչել են,
    Քեզի լավ ճանաչել են,
    Դե թոի, շուա արի։

## 175. ՍԱՐԻ ՍՄԲՈՒԼ

Սարի սմբուլ,
Կանչում եմ շուա արի,
Բաղի բլբուլ,
Իմ սերը մի մարի։
Յար ջան, սարի սմբուլ,
Յար ջան, բաղի բլբուլ,
Քեզ եմ կանչում
Դե արի, շուա արի։

## 176. ԴԱՐԴՈ

Դարդո՛...
Ջվացք արա ջո՛ւր մի թափա,
Վա՛յ լե, անավեր,
Ես ջահել եմ, ինձ մի խափա
Յաման դարդո։
Դարդո՛ ...
Գեղով կասեն քո յար դեշ ա,
Վայ լե, տնավեր,
Ինձի համար թուխ քիշմիշ ա,
Յամա՛ն դարդո։
Դարդո՛ ...
Հերիք անցնես մեր աան բոլոր,
Վայ լե, անավեր,
Ինձի արիր խելքամոլոր,
Յաման դարդո։
Դարդո՛ ...
Ես արի ա՛խ, դու արիր՝ վա՛խ,
Վայ լե, անավեր,
Մեր սարիրն էր եկնոց կախ,
Յաման դարդո։
Դարդո՛ ...
Գեղի բոլոր մանդր շուշա,
Վա՛յ լե, անավեր,
Գեղին մոաիկ յարն անուշ ա,
Յամա՛ն դարդո։

## 177. ԲԱՏՈԼԱ

Բատոլա ջան, բատոլա,
Հավեն անուշ կցոլա։
Աղբրի ակեն կոնել ես,
Բատոլա ջան, բատոլա,
Աղբրի թասը բոնել ես,
Հավեն անուշ կցոլա։
Սարի ուսին պաղ քամի,
Բատոլա ջան, բատոլա,
Քամին քաքուլդ տանի,
Հավեն անուշ կցոլա։
Բաղիս միջին կա նոնի,
Բատոլա ջան, բատոլա,
Խնձոր դցեմ՝ ղու բոնի,
Հավեն անուշ կցոլա։

## 178. ՍԻՐԵԼ ԵՄ

Սիրել եմ, սիրել եմ,
    Սիրսաան,
Վախենամ աանեն ոսաան։
Վախենամ աանեն ոսաան,
Ծամեր վեր դլխուս դուս աան,
Էն խորոտ տղի քելքը,
Սիրել եմ, սիրել եմ,
    Սիրսաան,
Տարավ իմ դլխի խելքը
Վախենամ աանեն ոսաան։

## 179. ԱՐԵԳՆԱԶ, ՀԵՐԻՔՆԱԶ

Սերսուփ, ղամար, ջանե՛ ջան,
Բոլոր երես Արեքնազ,
Ունքներ կամար, ջանե՛ ջան,
Մոլորել ես Հերիքնազ,
Աչքերդ ի խաժ, ջանե՛ ջան,
Բոլորել ես Արեքնազ,
Ծամերա ի կարճ, ջանե՛ ջան,
    Մոլորել ես, ջանե՛ ջան, Արեքնազ,
Պսաի բերան, ջանե՛ ջան,
    Բոլորել ես Արեքնազ։

Ծամերդի էրան, ջանե՛ ջան,
Մոլորել ես, Հերիքնազ։

## 180. ԼԱՃԻ ՄԵՐ

Լաճի մեր, լաճի մեր՝
Այվան-օթախ,
Թող մեջ քնի,
Որ հով էլնի.
Լա՜ճ ի պիրե, լա՜ճ։
Քյածի մոր, քյածի մոր
Տարեք թալվնն,
Թրքի խռաեն
Թող քիթ պռնի,
Քա՜ծ ի պիրե, քա՜ծ։
Լաճի մոր, լաճի մոր,
Տարեք բաղչեն,
Քյաղի վարդեր,
Վարդ խռառաի,
Լա՜ճ ի պիրե, լա՜ճ։
Քածի մոր, քածի մոր,
Տարեք հանդեր,
Սոխ քյախնքի,
Սոխ խոտռաի,
Քիթ մոմոա,
Քյա՜ծ ի պիրե, քյա՜ծ։

## 181. ՀԱԶԱՐ ԷՐՆԵԿ

Հազար էրնեկ էն ավուր...
Դհոլ-զուռնա չալեցուցին,
Կարմիր-կանանչ շոր խաղուցին,
Խարս ու փեսա ձեռ բռնեցին,
Ժամու դռան կայնեցուցին,
Ավեաարան կարթացուցին։
Տո՜ւյ, աո՜ւյ, աո՜ւյ, տո՜ւյ
Տո՜ւյ, աո՜ւյ, տո՜ւյ։

## 182. ՎԱՅ ԼՈ ...

(Կատակերգ)

Աղջի, օր դու ինձի չսիրիր,
Էն գախ, որ ձեր դռնեն կընցնի,
Ընչի՞ դու դուռ կայնեցիր,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, լո՜, վա՜յ լո՜,
Աղջի՜, օր դու ինձի չսիրիր,
Էն գախ, որ դու լվացք կենիր,
Ընչի՞ էն ջուր կփրփրեր,
Վա՜յ, վա՜յ լո՜, վա՜յ լո՜,
Աղջի՜, օր դու ընձի չսիրիր,
Էն գախ, որ դու կով կկթիր,
Ընչի՞ էն ավել թոզ-դուման կաներ,
Վա՜յ լո՜, վա՜յ լո՜, վա՜յ լո՜։
Աղջի՜, օր դու ընձի չսիրիր,
Էն գախ, որ դու ավել կանիր,
Ընչի՞ էն ավել թոզ-դուման կաներ.
Վա՜յ լո՜, վա՜յ լո՜, վա՜յ լո՜։

## 183. ԴԵՐԻԿՈ ՋԱՆ

Մեր դռան առաջ քառսուն կարաս,
Դերիկո ջան,
Քառասուն կարսի գինին էր խաս,
Դերիկո ջան,
Ջուխտակ ջեյրան եկան անցան,
Դերիկո ջան,
Մեկն էր լորիկ, մեկն էր թառլան,
Դերիկո ջան։

## 184. ՀԱՄ ԴՅՈՒԼ

Համ գյոզ, համ վարդ,
Համ նարգիզ,
Ջոլի կոունկ, էրկեն վիզ,
Կարգե մամե, կարգե զիս,
Դուրգար մարդու մի տու զիս,
Փեա կաաչա մոռնա զիս։
Համ գյուլ, համ վարդ,
համ նարգիզ,
Ջոլի կոունկ, էրկեն վիզ,
Կարգե մամե, կարգե զիս,
Գործավորի մի աու զիս,
Էրթա գործի, մոռնա զիս։
Համ գյուլ, համ վարդ,
Համ նարգիզ,
Ջոլի կոունկ, էրկեն վիզ,
Կարգե մամե, կարգե զիս,
Վարժապեաի դու տու զիս,
Ժժեր կարդցու, պախա զիս։

## 185. ԻՄ ՈՐԴԻ ՍՈԽԱԿԸ

Երեան երթալու է,
Վա՜յ լե՜, լե՜, լե՜,
Վա՜յ լո՜, լո՜, լո՜,
Քերեկան կարդալու է,
Իմ որդի Սոխակը։
Ես ի՞նչ կանամ քերեկան,
Վա՜յ լե՜, լե՜, լե՜,
Վա՜յ լո՜, լո՜, լո՜,
Յար ունեմ ուսումնական,
Իմ որդի Սոխակը։
Քեզե սար, արա սեյրան,
Վա՜յ լե՜, լե՜, լե՜,
Վա՜յ լո՜, լո՜, լո՜,
Նմանի եզնիկ-ջեյրան,
Իմ որդի Սոխակը։

## 186. ՆԱՄՐՈՒԹԱ ՍԱՐԵՐ

Նամրութա սարեր
Մրժ էր, դուման էր,

Աերորի գառներ,
Սուսան ջան,
Քեզի ղուրբան է։
Նամրութա սարեր
Պատեր էր պաղ ձուն,
Աուսան կկանչեր.
—Աերոր ջա՛ն,
Փախչինք, մանիք տուն։

## 187. ԼԵ, ԿՃԵ, ԼԵ, ԼԵ

Կաքավ կայնե վեր քարին
Լե՛ կճե, լե՛, լե՛,
Խարար կուաա իմ յարին,
Լե՛ կճե, լե՛, լե՛,
Լե՛, լե՛, կճե, յար ունեմ։
Բաղի դուռը բաց անեմ,
Լե՛ կճե, լե՛, լե՛,
Խոտ քաղողին հաց տանեմ,
Լե՛ կճե, լե՛, լե՛,
Լե՛, լե՛, կճե, յար ունեմ։
Լորիկ թռավ վեր քարին,
Լե՛ կճե, լե՛, լե՛,
Ոչխար կարծա վեր սարին,
Լե՛ կճե, լե՛, լե՛,
Լե՛, լե՛, կճե, յար ունեմ։

## 188. ԿԱՐՄԻՐ ՎԵԼՈՅՈՎ ԱՂՋԻԿ

Կարմիր վելոյով աղջիկ,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Քո խոր տսա քե աա ձիկ,
Նարո՛յ, Թաժա յարո ջան։
Էն խորոա աղի քելքը,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Տարավ իմ գլխու խելքը,
Նարո՛յ, Թաժա յարո ջան։
Մոռի հառուն լողացա,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Մոռի ջուչեն գողացա,
Նարո՛յ, Թաժա յարո ջան։
Յոթ տարի հիվանդացա,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Քեզի տեսա, լավացա,
Նարո՛յ, Թաժա յարո ջան։

## 189. ՆԱՐԸՆՋԻ ԲԱՍԻ

Քյամար եմ կապե,
Լենքը մի մաա ա,
Ջանե ջա՛ն,
Սիրել եմ, կառնեմ,
Ջայնամ աղքաա ա,
Ջանե ջա՛ն։
Նարընջի բասի,
Նարընջի բասի,
Ջանե ջա՛ն,
Սիրել եմ, կառնեմ,
Անունն Աղասի,
Ջանե ջա՛ն։
Քյամար եմ կապել,
Լենքը մի թիզ ա,
Ջանե ջա՛ն,
Սիրել եմ, կառնեմ,
Ջայնամ թիթիզ ա,
Ջանե ջա՛ն,
Նարընջի բասի...
Բոսաան եմ ցանել
Էս տարվա տարին,
Ջանե ջա՛ն,
Ջելավ մի ջամամ,
Ղրկեի յարիս,
Ջանե ջա՛ն։
Նարընջի բասի ...

## 190. ԷՐԹԱՆՔ ՍՏԱՄԲՈԼ

Էրթանք Աստամբոլ,
Դաաենք փարա բոլ,
Առնենք ջուխա մի սոլ,
Տանինք յարոյին։
Արի՛, յար, արի՛,
Խոռվ մի կենա,
Աուա աստվորի բան,
Ձի, քե չի մնա։
Էրթանք Պսաի գեղ,
Բերենք աիկ մի եղ,
Անենք ձվաձեղ,
Տանենք յարոյին։
Արի՛, յար, արի՛,
Խոռվ մի կենա,
Աուա ասավորի բան
Ձի, քե չի մնա։
Ե՛լ, էրթանք Շուշի,
Առնենք ալ-փուշի,
Ջուխտըմ էլ զառ մաշիկ,
Տանենք յարոյին։
Արի՛, յար, արի՛,
Խոռվ մի կենա,
Սուտ ասավորի բան
Ձի, քե չի մնա։

## 191. ՋԵՆԻ, ՋԵՆԻ

Դասաե մի վարդ եմ քաղե,
Ա՛յ Ջենի, Ջենի,
Քեզի համար եմ պախե,

Դաստեմ խնկենի։
Արազը րուզ ա, րուզ ա,
Ա՜յ Ջենի, Ջենի,
Իմ սիրար քեզի կուզա,
Դաստեմ խնկենի։
Ալ բոխչես ուզեմ, ուզեմ,
Ա՜յ Ջենի, Ջենի,
Իմ խեր լե քեզի չուզե,
Դաստեմ խնկենի։

### 192. ԼՍՈՆՔ ԶՄՄԵՆ

Լսոնք զմմեն
Տարաակ պան ի,
Կարմիր գինին
Ազվոր պան ի։
—Ա՜յ աո՜ւյ, աո՜ւյ,
Ջան տա՜ւյ, աո՜ւյ
Տո՜ւյ աո՜ւյ աո՜ւյ։
Էկեք էոօր լավ քեֆ անենք,
Դուշմաններիս աչքր հանենք,
Հե՜յ աո՜ւյ, աո՜ւյ,
Տո՜ւյ, աո՜ւյ, աո՜ւյ,
Ջան, տո՜ւյ, աո՜ւյ, աո՜ւյ։
Քեֆ արոզին կանչել կուտամ,
Ով քեֆ չանի խրկել կուտամ,
Ա՜յ աույ, աո՜ւյ
Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ,
Ջան, աո՜ւյ, աո՜ւյ, աո՜ւյ։

### 193. ՆԱՐԳԻԶ ՕՅ

Ես ինչ եմ արել քեզի,
Նարգիզ, օ՜յ, Նարգիզ։
Էրեցիր, վառիր ընձի,
Նարգիզ, օ՜յ, վառվում եմ։
Ջիրիս բերանը նեղ ա,
Նարգիզ, օ՜յ, Նարգիզ,
Ջեբս խնձուրի տեղ ա,
Նարգիզ, օ՜յ, վառվում եմ։
Քեզի տեսա գառա ես,
Նարգիզ, օ՜յ, Նարգիզ,
Մի պուտ ջուր տուր, վառա ես,
Նարգիզ, օ՜յ, Նարգիզ։

### 194. ՆՈՒԲԱՐ

Նուբա՛ր, Նուբա՛ր, թաժա Նուբար,
Ընչի՞ կերար մրոու բիբար։
Նուբարի էրես բոլոր էր,
Նուբա՛ր, Նուբա՛ր, թաժա Նուբար,
Նուբարի ճամբախ մոլոր էր,
Ընչի՞ կերար մրոու բիբար։
Նուբարի աչքեր խումար էր,
Նուբա՛ր, Նուբա՛ր, թաժա Նուբար,
Նուբարը մոր մեկ ու ճար էր,
Ընչի՞ կերար մրոու բիբար։

### 195. ԱՐՏ ԵՄ ՑԱՆԵ

Արա եմ ցանե զարի, (2)
Արի՛, յար ջան, արի՛,
Կաոնեմ գալոզ տարի։
Արտ եմ ցանել բամբակ (2)
Թե որ չառնես, աղջի՛,
Վրեզ կտամ գանգատ։
Կանչեմ, արի՛, արի՛, (2)
Էս վերանի օրը,
Դառել ա մի աարի։
Կայնի վերի-վերի, (2)
Թե որ չառնես, աղջի՛,
Մնաս որբևվերի։

### 196. ՔՅԱ ՍԵՎԱՎՈՐ

Քյա սե, սեավոր մարե,
Քյա սե, սրտագալար մարե,
Հորի՞ իմ տուն ավիրեցիր,
Իմ կարիճ,
Իձնե խանեցիր։
Քյա, սե, սեավոր աղջիկ
Քյա՝ սե, սրաագալար աղջիկ,
Արի քե տամ Վանա խոջին,
Վանա խոջին, կարմիր բոխչին։
Քյա սե, սեավոր մարե,
Ես ի՞նչ կանեմ Վանա խոջեն,
Վանա խոջեն, կարմիր բոխչեն
Ղուրբան կանեմ իմ Սաքոյի,
Բիզ քյոլոզին, նախրափեաին,
Ջարխի թելին... վա՜յ։
Նախրափեար ձեոր կտոնի,
Գեզի նախիր հանգ կտանի,
Հանգեր ման գա,
Իրկուն գեզ գա,
Գեզեն աուն գա,
Բալքի աչքին
Քիչ մր քուն գա։

### 197. ՇՈՒՏ-ՇՈՒՏ ՔԵԼԱ

Շուա-շուա քելա, մի հեվա,
Քա աղա քելա, մի հեվա,
Լավ աղի լոթութենեն,
Աղջիկ չի կանա քելա։
Գյամին էկավ լափ աալեն,
Շուա-շուտ քելա, մի հեվա,
Ջուխտակ խնձոր ծափ աալեն,

Քյա տղա քելա, մը հեվա,
Լավ աղի լոթութենեն,
Աղջիկ չի կանա քելա։

## 198. ՆԻՆԱՐԵ

Թունդիր վառի բալան բոց,
Նինարե՛, Նինարե՛,
Աղջիկներու սպիտակ ծոց
Նինարե՛, Նինարե՛,
Տղեկներու դարդ ու խոց,
Նինա՛ր, բոյդ չինար է։
Հերիք անցնես մեր պատով,
Նինարե՛, Նինարե՛,
Մեր պատ բլավ քու ապով,
Նինա՛ը, բոյդ չինար է։
Աղիղ օրվա մեր յախնին
Նինարե՛, Նինարե՛,
Տերտեր կերե՝ տիրոխնին
Նինա՛ր, բոյդ չինար է։
Նախիր կայնե վեր սարին,
Նինարե՛, Նինարե՛,
Թուխթ մը ճամփեմ Նինարին,
Նինա՛ր, բոյդ չինար է։

## 199. Ախ ԹԵԼԼԻ

Ա՜խ, Թելլի՛, Թելլի՛, Թելլի յար,
Զարկենք, թող խաղա, Սոնե ջան,
Նշանելու յարս դու ես,
Ա՜խ Թելլի՛, Թելլի յար,
Ոսկիս ու քյամարս դու ես,
Զարկե՜նք, թող խաղա, Անոե ջան։
Ալ բաղչիս բարը դու ես,
Ա՜խ Թելլի, Թելլի յար,
Իմ դովական յարը դու ես,
Զարկե՜նք, թող խաղա, Անոե ջան։

## 200. ԼՈՒՐԿԵ

Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Սանիկդ դրկե,
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Ջանիկդ դրկե։
Օջախը վառեմ՝ ձու խաշեմ,
Էրեսիդ խալին աշեմ։
Կարմիր դինին մաղա էր,
Յարիս շուշպեն թաղա էր։
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Սանիկդ դրկե,
Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Ջանիկդ դրկե։

## 201. ԳՈՒԹԱՆ

Ումուդ ունեմ
Էն սուրբ խալին,
Մատաղ էլնեմ
Կյութնի մաճին,
Կյութան չըլներ՝
Աշխար ի՞նչ էր։
Կյութնի թախում
Նմուշ-նմուշ
Կյութնի կյալում
Քընց էն անուշ։
Կյութան չէլնեբ,
Աշխարհ ի՞նչ էր։
Աշխարհի շեն
Վեր կյութնին էբ,
Կյութան չէլներ,
Աշխար ի՞նչ էր։

## 202. ԽԱԹՈՒՆ ԽԱՐՍԵ

Խաթուն խարսեն
Սըշկան մանի,
Լելե կասե,
Խաթուն խարսեն
Կրտնակ քաշե,
Լելե կասե,
Խաթուն խարսեն
Հաց կթխա,
Լելե կասե։
Խաթուն խարսեն
Կով կկթե,
Լելե կասե,
Խաթուն խարսեն
Հմմեն տըծե
Լելե կասե։

## 203. ԱՂՋԻ, ԱՐԵ

Աղջի, աբե քե աամ քաղաք,
Նստիս կայնիս խանմնակ։
—Չեմ ուզե, դադո՛,
Չեմ ուզե, բաբո՛,
Դարդես դու խաբար տու, դադո (2)։
—Աղչի, արե քե աամ Նաղար
Սև Հաբոյին մաղես ալուր։
—Չեմ ուզե, դադո՛,
Չեմ ուզե բաբո՛,
Դարդես դու խաբար աու, բաբո։
—Աղչի՛, ընչի՞ չուզես աղեն,
Կուզես չոբնի չիլախ տղեն։

### 204. ՀԱՍԱՆ ՂԱԼԱ

Հասան ղալեն մենք գնացինք,
Էնտեղ սոված մենք մնացինք։
Վերան ղառնա Հասան-ղալեն,
Սատկի էնվեր փաշի բալեն,
Մեռս թողի սանը լալեն։
Հասան-ղալեն քար ու քռա,
Գյուլեն մեջը կֆռֆռա։
Գյուլի յարեն կմռմռա,
Վերան ղառնա Հասան-ղալեն,
Սատկի էնվեր փաշի բալեն,
Քուրս տանը թողի լալեն։
Հասան ղալեն, շատ դժար էր,
Էնվեր փաշի սիրտը քար էր։
Վերան դառնա Հասան-ղալեն,
Սատկի էնվեր փաշի բալեն,
Բալես թողի տանը լալեն։

### 205. Ախ ՆԱՆԻ...

Ձեռներս կապեցին,
Գամին դրեցին,
Լալով ու ողբալով,
Ծամփու դցեցին։
Ա՜խ նանի՜, նանի՜,
Ջա՜ն, նանի՜, նանի՜,
Քից՝ ջուրը սանի։
Հարավի քամին մանել էր դամին,
Ղրկում էր Անին։
Փշի՜ր, քամի, փշի՜ր,
Սալդաթ են տանում,
Տանից ու վաթանից,
Նանից են հանում։
Ա՜խ նանի՜, նանի՜,
Ջա՜ն, նանի՜, նանի՜,
Քից՝ ջուրը սանի։
Հարավի քամին քշում էր դամին,
Ղրկում էր Անին։

### 206. ԿԱՆՉԵ ԿՌՈՒՆԿ...

Կանչե, կռունկ, կանչե,
Քանի դարուն է,
Սալդաթների սիրտը
Լիքը արուն է։
Մտա կանցիլարը,
Վառի մոմերը,
Ջեռս դցի հանի
Պերվի նոմերը։
Մաա կանցիլարը,
Կայնած մնացի,
Խարտը սարեք մորս
Սալդաթ գնացի։

Աղե՛, գաթա թխա,
Դիր սանեմ հեռու,
Դիրքերը փորելուց
Քեզ դցեմ միասու

### 207. ՎԱԴՈՆԻՆ

Վաղոն մի բանի,
Վաղոն մի բանի,
Վաղո՛ն, բախտդ ընկնեմ,
Ցարիս մի տանի։
Վաղո՛ն, մի ժաժա,
Վաղո՛ն, մի ժաժա,
Վաղո՛ն, բախտդ ընկնեմ,
Ցարս էր թաժա։
Վաղո՛ն, մի թնդա,
Վաղո՛ն, մի թնդա,
Վաղո՛ն, բախտդ ընկնեմ,
Թող յարս խնդա։
Սալդաթ մի դնա,
Սալդաթ մի դնա,
Ցամա՛ն, յար ջան,
Ցարդ կմնա...

### 208. ԿՌՈՒՆԿ ԻՋԱԾ ՏԵՂԴ

Կռունկ իջած տեղդ, յամա՛ն,
Ջայիր, չիման է,
Աշխարքին արև է,
Ինձի դուման է։
Կանչե՛ կռունկ, կանչե՛,
Ղարիբս սոն դա,
Սրախս յարեքը լավանա,
Աչքերիս քուն դա։
Շեն հայրիկ, շեն մայրիկ,
Տունդ շեն մնա,
Ես դնում եմ ղարիբ երկիր,
Տեղդ լեն մնա։
Էն քամրախ բալիցեն,
Տասներկու կամար,
Բալիցեն շինել են,
Իմ յարի համար։
Գնալով, դնալով յար ջան,
Երկրից հեռացա,
Տասնրութ տարվա մեջը, յամա՛ն,
Դարդի ահրացա։
Կանչե՛, կռունկ, կանչե՛,
Սարերը դուման է,
Ասեք մորս՝ սալդաթ կերթամ,
Հալս յաման է։

### 209. ԲԱԽՏՍ ՂԱՐԱ ԷՐ

Բախտս ղարա էր
Մայրիկ ջան,

Սիրտս յարա էր։
Նստեցի մաշինեն,
Դեպի Դիլիջան,
Մտյրիկս կանչում էր՝
Սոլդաթ բալա ջան։
Բախտս ղարա էր,
Անուշ ջան,
Թոփի յարա էր։
Նստեցինք վագոնը,
Մինչև Երևան,
Լուսադեմին քշին,
Շատ հեռու տարան։
Բախտս ղարա էր
Անուշ ջան,
Սիրտս յարա էր։

## 210. ԻՆՉ ԿԸԼՆԵՐ

Ի՞նչ կլիներ,
Նիկոլը սատկեր,
Ի՞նչ կը լիներ,
Ցարս դար առն,
Դինջ կըլներ։
Սարերի լալեն,
Սարերի լալեն,
Կրակն ընկներ բալքի,
Նիկոլի բալեն։
Սարերի ձունը,
Սարերի ձունը,
Աստված քանդեր,
Նիկոլի տունը։
Կաքավը ձորին,
Կաքավը ձորին,
Նիկոլի էրեսից
Հասանք էս օրին։
Ա՜խ, մեր դեշ բախտը,
Ա՜խ, մեր սև բախտը,
Տակեն վեր ջրջվեր,
Նիկոլի թախտը։
Նիկոլը սատկեր
Ի՞նչ կլիներ,
Ցարս դար տուն,
Դինջ կըլիներ։

## 211. ՆԻԿՈԼԻ ՔԱՐԻՆ

Նստեմ Նիկոլի քարին,
Նստեմ Նիկոլի քարին,
Ապելացի անեմ,
Նիկոլի ազիզ բալին։
Էդ էլ իր քոռ ըախտեն,
Նիկոլն ընկավ թախտեն,
Ջուխտ աչքերով քոռացավ,
Սալդաթին մոռացավ։

## 212. ԸՆԿԵԼ ԵՄ ՍԱԼԴԱԹ

Ընկել եմ սալդաթ,
Ընկել եմ սալդաթ,
Մայրիկ ջան,
Ո՞ւմ անեմ դանդատ։
Ընկել եմ գերի,
Ընկել եմ գերի,
Քուրիկ ջան,
Նամակ առ, բերի։
Գերմանու գերի,
Գերմանու գերի,
Մայրիկ ջան,
Ձենս չի բերի։
Գերմանեն քոնար,
Գերմանեն քոնար,
Քուրիկ ջան,
Սալդաթին մոռնար։
Գերմանեն վաս է,
Գերմանեն վաս է,
Մայրիկ ջան....
Գերմանու սարն եմ,
Գերմանու սարն եմ
Անուշ ջան,
Դարձա՝ քեզ կառնեմ։

## 213. ՄՏԱ ԿԱՆՑԻԼԱՐԸ

Մաս կանցիլարը,
Վառի մոմերը,
Ձեռս դցի հանի
Սալդաթ նոմերը։
Կանցիլարի դռան
Տաշած մեծ քարը
Մերս բերեց, դցեց
Դարբեդիարը։
Կանցիլարի դուռը,
Տասներկու կամար,
Սև օրով մեծացա
Սալդաթի համար։
Կանցիլարի դուռը,
Ջաքջով աաշած էր,
Իմ յարի պաակերը,
Վրեն քաշած էր։

## 214. ՑԱՐ ԳՑՈՒԼԱ

—Ցար դյուլա,
Ծիծեռնակի բունը,
Աստված քանդեր
Գերմանացու տունը։

—Յար գյուլա,
Մեր օթախի հաշտը,
Յարիս տարան,
Պատերազմի դաշտը։

Յար գյուլա,
Մեր օթախի փեշը,
Յարիս տարան,
Պատերազմի մեջը։

Յար գյուլա,
Ես ի՞նչ կանեմ նամակ,
Մալադո եմ,
Կերթամ սարի քամակ։

## 215. ԿՌՈՒՆԿ ՍԻՐԵՍ

Կռունկ, սիրես էրկու բալիդ արեր,
Յարս մնաց Նախչվանու սարերը։
Լուսինը բոլորել ա,
Կռո՜ւնկ սիրես էրկու բալիդ արեր,
Իմ սիրտը մոլորել ա,
Յարս մնաց Նախչվանու սարերը։
Իմ ճամփեն քար ու քռա,
Կռունկ սիրես էրկու բալիդ արեր,
Սիրտս լիքը մոմուռ ա,
Յարս մնաց Նախչվանու սարերը։

## 216. ԱՐԵՎՆ ԷԼԱՎ

Արեն էլավ կամար-կամար,
Էս լույն էկավ մեզի համար,
Մակարից էլավ հրաման,
Որ հայիցը սալդաթ տարան։
Էկան գրեցին ձիանը
Մակարից հասավ զիանը։
Սալդաթն հասավ Սարիղամիշ,
Մեջքին կապած կապույա ղայիշ։
Սալդաթ տղեն Քանաքեռ ա,
Թվանքն ուսին ծանդր բեռ ա,
Տունը քանդված պրիստավը,
Ջոկեց ջահելների լավը։
Էլ մենք չունենք մխիթարանք,
Երկնոց գեաից ընկանք, կորանք։
Անարաա կաթ աստվածածին,
Դու սաղ պահես նանի բալին։

## 217. ՏԱՆՈՒՄ ԵՆ

Տանում են, աղե ջա՛ն,
Տանում են,
Տանում են, վաթանից
Հանում են։
Ամա՜ն, տարան իմ յարին
Տանում են, աղե ջա՛ն,
Տանում են,
Տարան իմ մեկուճարին,
Տանում են,
Վաթանից հանում են։

## 218. ԻԳԴԻՐՈՒ ՍԱՐԵՐԸ.

Իկդիրու սարերը վայնա էր,
Հերանցս օթախը թոյնա էր։
Նստած աեղս քար չունեմ,
Իկդիրի սարերը վայնա էր։
Բաղ ունեմ ու բար չունեմ,
Հերանցս օթախը թոյնա էր։
Դարդն էկել ա աարել ա,
Իկդիրու սարերը վայնա էր,
Ո՞նց ա դու խաբար չունես,
Հերանցս օթախը թոյնա էր։

## 219. ՆԱՆԻ ՋԱՆ

Երանի մեռնեի ծնվածս օրը,
Ջերթայի հագնեի, նանի ջան,
Սալդաթի ջորը։
Առավոտը լուսին,
Ատակ գնացինք,
Տանից ու վաթանից, նանի ջան,
Կարոտ մնացինք։
Շաաերը կոաորվան,
Մնաց քիչ մասը,
Էս կռվիցը հասավ, նանի ջան,
Մեզ էս վնասը։
Տասնութ աարվա մեջը
Սալդաթ գնացի,
Ո՜վ սիրելիս քեզնից, նանի ջան,
Կարոտ մնացի։

## 220. ԱԴԵՍ ԸՆՁԻ ԲԵՐԵԼ Ա՛...

Ադես ինձի բերել ա,
Օրորոցում պահել ա,
Օրորոցում մեռնեի,
Թաքլե սալդաթ չգրվեի։
Կաթնատուր մայրիկ ջան,
Ը՞նչի բերեցիր,
Սե օրով պահեցիր,
Ջոլեր գցեցիր։

## 221. ԱՄԱՆ ՄԱՐՈ

Մեր բաղի դուռը բաց ա, Մարո՛,
Մարոն միջին քնած ա, յարո՜,
Քնած չի, քրանած ա, Մարո՛,
Վարդն էրեսին փռած ա, յարո՛։
Յաման Մարո, Մարոյին, Մարո՛,

Սալդաթ տարան յարոյին, Մարո՛։
Ձեր դագի գուռը րաց ա, Մարո՛,
Սպիտակ սուփրեն փռած ա, յարո՛,
Յարս կոզքին քնած ա, Մարո՛,
Վարդաչրով լցված ա, յարո՛։
Յաման Մարո, Մարոյին, Մարո՛,
Սալդաթ տարան յարոյին, Մարո՛։

## 222. ԱՅ ԼՈԹԻ ՄԱՐԱՆ

Ա՜յ լոթի Մարան,
Ա՜յ լոթի Մարան,
Սալդաթ են տանում
Յարոյիս, տարա՜ն։
Ուշի ուշ անեմ,
Թ'ալան դուշ անեմ
Իմ ախպոր բալին,
Կանվա դոշ անեմ։
Ա՜յ լոթի Մարան...
Մաշինեն էկավ,
Տասներկու վագոն,
Յարոյիս տարավ,
Սալդաթ Դրակոն։
Ա՜յ լոթի Մալան....
Մաշինեն էկավ,
Վազելեն գնաց,
Յարիս այլուխը
Իմ մոտը մնաց։
Ա՜յ լոթի Մարան,
Ա՜յ լոթի Մարան,
Սալդաթ են տանում
Յարոյիտ, տարա՜ն։

## 223. ՅԱՐ ԱՄԱՆ

Յար աման ղյուլ աման
Գյուլերս թաղացել ա,
Յարոյիս տանում են,
Դարդերս շատացել ա։
Սալդաթ ադին տուն չունի,
Յար աման, ղյուլ աման,
Գյուլերս թաղացել ա։
Մի աեդ հալալ քուն չունի,
Յարոյիս տանում են,
Դարդերս շատացել ա։

## 224. ԱԴԵ ՋԱՆ, ԱԴԵ...

Մերս, քուրս թողի,
Սալդաթ գնացի,
Գիշերը մաածի,
Ցերեկը լացի։
Ադե շան, ադե՛, (2)
Բալեդ սալդատ է։
Քանի սուակա,
Ձոլով փորսող գնացինք,
Ծարավ ու անոթի,
Երկար մնացինք,
Ադե ջան, ադե՛, (2)
Դարդերս շատ է։

## 225. ԱՄԱՆ ՅԱՐ

Ամա՜ն յար, սարովն արի,
Անուշ յար, դարովն արի,
Ամպերը շարան-շարան,
Ամա՜ն յար, սարովն արի,
Իմ յարը սալդաթ տարան,
Անուշ յար դարովն արի։

## 226. ԱԼ ՄԱՐԻՆԵՍ

Ալ մարինես ծալ մնաց,
Սիրելիս սալդաթ գնաց։
Ծառ անկեցի բար չունեմ,
Ալ մարինես ծալ մնաց,
Է՜լ դարդիման յար չունեմ,
Սիրելիս սալդաթ գնաց։
Էրնեկ նրան՝ դարդ չունի,
Ալ մարինես ծալ մնաց,
Ղարիբ երկիր յար չունի,
Սիրելիս սալդաթ գնաց։

## 227. ՍԱԹՈ ՅԱՐ ՋԱՆ

Էրնեկ ծառ ըլնեի,
Ճամփին բուսնեի,
Էնքան չմեռնեի,
Յարիս տեսնեի։
Սաթո յար ջան,
Յարիս տեսնեի։
Արի՛ յա՜ր, շան արի՛,
Տունս շեն արա,
Քու քաղցր րալեքի,
Տեղը լեն արա,
Սաթո յար ջան,
Տեղը լեն արա։
Արաղն անց կացանք,
Ճամփեն քարոտ էր,
Տանից սեղից էլած,
Սիրտ յարոտ էր,
Սաթո յար ջան,
Սիրաս յարոտ էր։

## 228. ԳՅՈՒԼԻ ՋԱՆ

Գյուլի ջան,
Ֆայտոնի ակները,



8—721

Սալդաթ տարան,
Իմ աղիզ ախպերը։
Գյուլի ջան,
Կարմիր կովը դոմին,
Մերդ քոռնալը,
Ո՞նց ես ուտում սոմին։
Գյուլլի ջան,
Մանուչակը քոլին,
Մերդ քոռնար,
Ո՞նց ես քնում չոլին։

## 229. ՀՈՊ ԳՅՈՒԼԻ

Հոպ Գյուլի, գյուլա, գյուլա, յարս։
Դուզն եմ ասում, վերջը զուր ա, յարս։
Հո՛պ Գյուլի, թե չգրես նամակ,
Աման Գյուլի, կերթամ սարի քամակ։
Հո՛պ Գյուլի, ֆայտոնի մասերը,
Սալդաթ տարան, քու սեւ-սաթ աչքերը։
Հո՛պ գյուլի՛, ինչ եմ անում նամակ,
Սալդաթ տարան, կերթամ սարի քամակ։
Հո՛պ Գյուլի, գյուլա, գյուլա, յա՛րս,
Դուզն եմ ասում, վերջը զուր ա յարս։

## 230. ՄԱՂՆ ԱՌԱ

Մաղն առա գացի ցանի,
Ջիրիցս խնձոր հանի,
Տեսա յարս ընդի չէր,
Ընդի մի հոգոց հանի։
Վո՛ւյ, վո՛ւյ, տարան իմ յարը,
Սալդաթ տարան իմ յարը,
Բա ո՞նց կլնի իմ ճարը։

## 231. ԱՆՏԵՐ ՄՆԱՐ

Անտեր մնար ....
Ջար ճամփան,
Ցարիս տարավ հանավ,
Ջարի Ասաբըխան։
Արի մի գնա,
Դառի մի գնա,
Ղարիբ տեղրան, յաման,
Ղարիբ մի մնա (2)։

## 232. ԱՄԱՆ Է՛Յ

Աման էյ՛, սև աչեր
Ինչ անեմ,
Չէ որ ասացիր
Քո յարն եմ (2)։
Մեխեխի բանդը բլել ա,
Յարս աակին քնել ա,
Ձեն ավի ձենս չառավ,
Էն ինչ անուշ քնել ա։
Աման է՛յ, սև աչեր,
Ինչ անեմ,
Չէ՛ որ ասացիր՝
Քո յարն եմ,
Չէ որ ասացիր՝
Քո յարն եմ։

## 233. ԿՌՈՒՆԿՆԵՐ

Երկնքումը շարան կապած թռչում եք,
Իմ քաղցր բալեքից հեչ խաբար չունեք (2)։
Իմ աչքերուս քունը կարավ,
Կռունկներ...
Օտարության մեջ հալվեցավ օրըս,
Կացեք, նամակ գրեմ,
Տարեք խեղճ մորս (2),
Ասեք՝ պանդուխտ որդիդ
Ջեկավ, կռունկներ ...

## 234. ԼԵՆԻՆՆ ԵԿԱՎ

Լենինն եկավ,
Ջոռով զորքով,
Մեզի ազատեց,
Հողը զոռրի
Ձեռքից խլեց,
Գեղացուն տվեց։
Խեղճ գեղացի,
Ուրախացի,
Էլ զոռրա չկա,
Նրա տեղը
Թե թիկունք
Մեծ Լենինը կա։
Դե, վեր կացեք,
Ախպեր-աղերք,
Ջարկենք դաշնակին,
Ու ձեռ զարկենք
Մեզ ազատող
Կարմիր Բանակին։
Հե՛յ, վեր կացեք,
Գովարանենք
Կարմիր Բանակը,
Հաստատ մնա,
Լենինի բերած
Մեծ հաղթանակը։

## 235. ԼԵՆԻՆՆ ԻՐ ԶՈՐՔՈՎ

Լենինն իր զորքով
Իրա ծով խելքով,
Խեղճ ու նաչարին,

Բեհալ անճարին,
Ժողվեց իրար քով։
    Բանվոր—գեղացին
    Տեր դարձավ հիմի,
    Իր ունեցածին
    Ու հալալ հացին։
Ո՞վ էր տեսել
Էսպես հրաշք՝
Որ մշակ, նոքար
Իրավունքով տիրեր
Աշխարք,
Էլներ ղեկավար։
    Լենինն ասեց.
    —Ե՛լ, դուք սոված,
    Բանվոր—գեղացի,
    Ջենքերդ առ,
    Գնա առաջ,
    Գործդ իմացի։
Հին աշխարքին,
Ջարդով տվեք,
Ցիր ու ցան անենք,
Ժողովրդի անցած վերքին
Նոր դարման անենք։

## 236. ԼԵՆԻՆԱԿԱՆ

Լենինական, Լենինական,
    Ցարըս,
Կոմսոմոլիստ, կուսակցական
    Ցարըս։
Ըսաոլի վրի գինին,
    Լենինական, Լենինական,
    Ցարըս,
Կեցցե ղեկավար Լենին,
    Կոմսոմոլիսա, կուսակցական
    Ցարըս։
Ջերիս ոսկի դանակը,
    Լենինական, Լենինական,
    Ցարըս,
Կեցցե Կարմիր Բանակը,
    Կոմսոմոլիստ, կուսակցական
    Ցարըս։
Դուք խաղ կանչեք, ես թոնեմ,
    Կոմսոմոլիստ, կուսակցական
    Ցարըս,
Բալքի լորիկս րոնեմ,
    Կոմսոմոլիսա, կուսակցական
    Ցարըս։

## 237. ՍԱՐԻ ՍՈՂ Ա

Սարի սող ա,
Սարի սող ա, յարըս,
Կոմսոմոլ ա,
Կոմսոմոլ ա, յարըս։
    Սրի էրթանք մեր բաղը,
    Սարի սող ա,
    Սարի սող ա, յարըս,
Շախով կանչենք էն խաղը,
    Սարի սող ա,
    Կոմսոմոլ ա, յարըս։
Հանդերը հոռովել ա,
    Սարի սող ա,
    Կոմսոմոլ ա, յարըս։
Իմ յարը խոռվել ա,
    Սարի սող ա,
    Կոմսոմոլ ա, յարըս։
Ծաղիկ ես շաղով արի,
    Սարի սող ա,
    Սարի սող ա, յարըս,
Մեր կանաչ բաղով արի,
    Սարի սող ա,
    Կոմսոմոլ ա, յարըս։

## 238. ՍԱՄԱՂԱՐԻ ԳՈՐԾԿՈՄԸ

Սամաղարի գործկոմը,
Լավ բան ա անում,
Մաշինի ցորենը
Ջերդայով ա ցանում։
    Մաշինեն քշի վարի,
    Շաղերով յար ջան,
    Իրիկունը շուտ արի
    Խաղերով յար ջան։
Սամաղարի գործկոմը,
Լավ բան ա անում,
Մաշինի ցորենը,
Ջերղայով ա ցանում։
    Գեղի հանդերը վարել եմ,
    Շաղերով, յար ջան,
    Պլանս կատարել եմ,
    Խաղերով, յար ջան։

## 239. ՔԱՄԻ ՅԱՆԱ

Քամի յանա,
Քամի յանա, յարըս,
Կոլեկաիվը շաա լավ բան ա, յարըս,
    Էս ինչ լավ ա բամբակը,
    Քամի յանա,
Քամի յանա, յարըս,
Հով ա ուտենու ատկը,
Կոլեկաիվը շաա լավ բան ա, յարըս,
    Տրակտորով վարում ես,

Քամի յանա,
Քամի յանա, յարրս,
Պլանդ կատարում ես,
Կոլեկտիվը շատ լավ բան ա, յարըս։

## 240. ՎԱՐԴ ԵՄ ՔԱՂԵԼ

Վարդ եմ քաղել,
Փունջ եմ կապել,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Փունջ եմ կապել,
Քեզի համր նվեր ճամփել,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Նվեր ճամփել։
Շիր կանալի քշքշալը
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Քշքշալը,
Արի, տնից էրթանք կալը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն
Էրթանք կալը։
Արեի հետ ելնենք սարը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Ելնենք սարը,
Ինչ սիրուն ա
Մեր աշխարհը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջան,
Մեր աշխարհը։
Ինչ ես էդքան մնում տանը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Մնում տանը,
Իմ արևն ես ու իմ ջանը,
Հե՜յ ջա՜ն, հե՜յ ջա՜ն,
Ու իմ ջանը։

## 241. ՆԻՆԸՄ, ՆԻՆԸՄ

Նինըմ, նինըմ, տոնում ա,
Հո՜յ աման,
Ջադսի դոնից դառնում ա,
Չէ յաման։
Կոմսոմոլի առնում ա,
Հո՜յ աման,
Մերը խոըթ ա, խառնում ա,
Չէ յաման։
Քանի կանչեմ զայդեն ա,
Հո՜յ աման,
Կոլոա ալի սավդեն ա,
Չէ յաման։
Յարիս խոսքը պահել եմ,
Հո՜յ աման,
Փոխանցիկը ջահել եմ,
Չէ յաման։
Յարիս խոսքով արեցի,
Հո՜յ աման,
Պլանս կատարեցի
Չէ յաման։
Պաղ ախպուրը ա, զուլալ ա,
Հո՜յ աման,
Ջաղս էրթալս հալալ ա,
Չէ յաման։
Նինըմ, նինըմ նազան ա,
Հո՜յ աման,
Յարս կուսակցական ա,
Չէ յաման։
Նինըմ, նինըմ յան դալու,
Հո՜յ աման,
Էրթանք սարը ման գալու,
Չէ յաման։

# ԽԱՂԻԿՆԵՐ

1. Առվի ջուրը հոտել ա,
Եզնիքը նստոտել ա,
Մերդ խորթ ա, այ ազա,
Շորերդ կեղտոտել ա։

2. Սարի դլխի ղուշ էլա,
Եթիմ տղի թուջ էլա,
Յարիս մայրիկը խորթ ա,
Խորթի աչքին փուշ էլա։

3. Ջաղացի դուռը ցախ ա,
Կատուրը լիքը դոխ ա։
Ախպորս զալուն մատաղ,
Գոտկումը լիքը վարդ ա։

*

4. Յարիս երդիկը ծուխ ա,
Խուճուճ մազերը թուխ ա,
Աչքեր ունի՝ ջուխտ ճրագ,
Սրիտ ա էրում անկրակ։

*

5. Բարձն ու խալին փռած ա,
Յարս վրեն քնած ա,
Աչքին, ունքին հավան եմ,
Համա ռանզը թռած ա։